Ազգ
Azg
5 ՆՈՅԵՄԲԵՐ 2008 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 204 (4098)

Գրադարան

Ամենայն հայոց կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Հնդկաստան

Նոյեմբերի 4-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Հնդկաստան:

Այցի ընթացքում Նորին սրբությանը երեք օր կհյուրընկալի Հնդիկ Մալանքար ուղղափառ քույր եկեղեցու պետ Բասիլիոս Մարթոմա Դիդիմոս Ա-ն (Հնդկաստանի Քերալա նահանգ):

Այնուհետեւ Վեհափառ հայրապետը կնախագահի Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու հիմնադրման 300-ամյակին նվիրված տոնակատարությունները: Հովվապետական այցի ընթացքում Հայոց հայրապետի ձեռամբ կվերաօծվի նաեւ Մադրասի Ս. Աստվածածին հայկական եկեղեցին, Վեհափառ հայրապետի գլխավորած պատվիրակությունը կայցելի նաեւ Տինգրայի Ս. Երրորդություն, Չինսուրահի Ս. Հովհաննես, Սեյդաբադի Ս. Աստվածածին հայկական եկեղեցիները: Կալկաթայում Հայոց հայրապետը կայցելի նաեւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Հայոց մարդասիրական ճեմարան:

ԱՐՑԱԽ

Կամ սկսել զրոյից, կամ էլ պատից իջեցնել հրացանը

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Որ ռազմական ծախսերի գերադասություն ունենալով, բայց չվայելելով որեւէ մեծ երկրի հովանավորությունը, Ադրբեջանը չի համարձակվի պատերազմական գործողությունները վերսկսել, թերեւս փաստվեց Մեյենդորֆյան հռչակագրի ստորագրումով: Ադրբեջանցի եւ հայ վերլուծաբանները փորձում են հռչակագիրը գնահատել իրենց շահերի շրջանակում: Մինչդեռ առկախ է մնում գլխավոր հարցը՝ ի՞նչ է շահում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եռակողմ ստորագրած պայմանագրից: Ի վերջո, պատերազմ լինի, թե առավել ակտիվացված խաղաղարար առաքելություն, արդյունքներն իր մաշկի վրա կրողը հենց առաջինը Ղարաբաղն է լինելու:

Մոսկովյան հանդիպումից մեկ օր առաջ ԼՂՀ արտգործնախարար Գեորգի Պետրոսյանը բացառիկ հարցազրույց տալով Արցախի հանրային հեռուստատեսությանը, այն դիտարկումն է արել, թե հիմնախնդիրը դրական հանգուցալուծման չհանգելու դեպքում հրամայական է դառնալու Ալիեւ կրտսերի խոսքը, թե պետք է ամեն ինչ սկսել մաքուր էջից: Այսինքն, եթե ճիշտ ենք հասկանում ԼՂՀ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի հայտարարության էությունը, Ղարաբաղի անկախությունն Ադրբեջանի կողմից չճանաչվելու դեպքում իրավիճակն առնվազն հանգեցնելու է նախնական բոլոր պայմանավորվածությունների անվավերությանը: Սա ասվել է հայ-ռուս-ադրբեջանական բարձրամակարդակ հանդիպման նախօրյակին, որից ընդամենը մի քանի օր առաջ Ղարաբաղի պաշտպանության բանակը հարձակողական բնույթի հաջողված զորավարժություններ է անցկացրել իշխանական էլիտայի ներկայությամբ:

Տես էջ 2

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Այսօր հայտնի կլինի Սպիտակ տան նոր տիրոջ անունը

ԱՄՆ-ում այսօր արդեն ավարտված նախագահական ընտրությունները մի շարք առումներով պատմական են: Նախ՝ առաջին անգամ գերհզոր այդ տերության ղեկին է հավակնում աֆրոամերիկյան ծագումով թեկնածուն՝ Բարաք Օբաման, որի հակառակորդն է տիպիկ ամերիկացի՝ անգլո-սաքսոնական ծագումով Մակքեյնը: Ընտրությունները պատմական են նաեւ իրենց մասնակցության աննախադեպությամբ: Ըստ հաղորդագրությունների, ընտրատեղամասերի առաջ հսկայական հերթեր են գոյացել, եւ հազարավոր ամերիկացիներ, ովքեր նախկինում անտարբեր էին ընտրությունների նկատմամբ, այս անգամ որոշել են անպայման իրենց մասնակցությունը ունենալ աննախադեպ այս գործընթացին: Երբ «**Ազգը**» հասնի իր ընթերցողներին, արդեն հայտնի կլինեն նախնական արդյունքները եւ պարզ կդառնա՝ ԱՄՆ-ը նախընտրեց «նոր հույսի՞ն, թե՞ հաղթանակեց հին փորձառությունը»:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատվիրակությունը Պեկինում

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Չինաստանի ԿԿ ԿԿ քաղբյուրոյի մշտական կոմիտեի անդամ Լի Չանչունը նոյեմբերի 3-ին, Պեկինում հանդիպել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատվիրակության հետ: Պատվիրակությունը գլխավորում էր Գագիկ Ծառուկյանը:

Հանդիպման ժամանակ Լի Չանչունը խոսել է Չինաստանի եւ Հայաստանի միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման, փոխադարձ դիվանագիտական, քաղաքական, առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ գյուղատնտեսական համագործակցության դրական արդյունքների մասին:

Լի Չանչունը հայտնել է, որ ՉԿԿ-ն ձգտում է հզորացնել միջպետական երկկողմանի բարեկամական փոխանակումները եւ համագործակցությունը:

Գագիկ Ծառուկյանն իր հերթին նշել է իր տպավորությունը Չինաստանի մեծ նվաճումների վերաբերյալ, որոնց երկիրը հասել է բարեփոխումների եւ թափանցիկ քաղաքականության 30 տարիների ընթացքում: Նա ընդգծել է «Բարգավաճ Հայաստանի» ձգտումը՝ զարգացնել հարաբերությունները Չինաստանի կոմունիստական կուսակցության հետ, առաջ մղելով երկկողմ համագործակցությունը քաղաքականության, տնտեսության, սպորտի եւ այլ ոլորտներում:

Ս. Սարգսյանը հանդիպումներ է ունեցել Ֆրանսիայում

Նախագահ Սերժ Սարգսյանը Ֆրանսիա կատարած աշխատանքային այցի երկրորդ օրվա առավոտյան հանդիպել է վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնի հետ: Վերջինս բարձր է գնահատել երկու երկրների միջեւ առկա պատմական խոր հարաբերությունները, կարեւորել է հայ համայնքի դերը հայ-ֆրանսիական կապերի ամրապնդման գործում: Նախագահը ներկայացրել է Հայաստանի մոտեցումները տարածաշրջանում տեղի ունեցող վերջին իրադարձություններին, ԼՂ հիմնախնդրի ներկա իրավիճակը եւ դրա կարգավորման վերաբերյալ օրերս Մոսկվայում ստորագրված եռակողմ հռչակագրի մանրամասները, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերությունների մերձեցմանը միտված քայլերը: Ֆրանսիայի Սենատի նախագահ Ժերար Լարշեն 30-րդ օրն է, ինչ ստանձնել է այդ պաշտոնը, եւ ՀՀ նախագահն առաջին երկրի ղեկավարն էր, որ հանդիպեց նրա հետ: Ս. Սարգսյանը կարեւորել է միջխորհրդարանական համագործակցության հետագա խորացումը՝ գոհունակություն հայտնելով առկա համագործակցության բարձր մակարդակից: Այդ հարաբերությունները որակվել են որպես շատ կարեւոր բաղկացուցիչ՝ երկու ժողովուրդների միջեւ բարեկամական կապերի հետագա խորացման համար: Ֆրանսիայի վարչապետի եւ Սենատի նախագահի հետ հանդիպումներից հետո ՀՀ նախագահը հանդիպում է ունեցել նաեւ աշխարհահռչակ շանսոնիե Շառլ Ազնավուրի հետ: Օրվա երկրորդ կեսին ՀՀ նախագահը հանդիպել է Ֆրանսիայի իր գործընկեր Նիկոլա Սարկոզիի հետ, իսկ երեկոյան մեկնել Բրյուսել:

30 միլիոն դոլար երեւանյան դրամահավաք-ճաշկերույթի ժամանակ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գրասենյակից հաղորդում են, որ նոյեմբերի 1-ին Երեւանում կայացել է հանդիսավոր դրամահավաք - ճաշկերույթ՝ նվիրված հիմնադրամի «Հեռուստամարաթոն-2008»-ին, որը հրավիրել էր ՀՀ նախագահ, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը: Իր նախադեպը չունեցող միջոցառման ավարտին գրանցվեց շուրջ 30 միլիոն ԱՄՆ դոլարի նվիրատվության խոստում: Հիմնադրամի 16-ամյա պատմության մեջ առաջին անգամ ամենամյա դրամահավաքը նշանավորվեց Հայաստանի եւ Ռուսաստանի շուրջ 120 գործարար հայերի կամքի եւ ներուժի այս աննախադեպ դրսեւորմամբ: Հանգանակված գումարները կուղղվեն Հայաստանի եւ Արցախի գյուղական համայնքների զարգացման հրատապ խնդիրների լուծմանը: Հոգաբարձուների խորհրդի անդամներից երեկոյին մասնակցել էին նաեւ ԼՂՀ նախագահը, Վեհափառ հայրապետը, վարչապետը, ԱԺ նախագահը, Կենտրոնական բանկի նախագահը, խորհրդի անդամ նախարարներ, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Գործարարների նվիրատվության խոստումները պարբերաբար հայտարարվում էին երեկոյի ընթացքում, որը վարում էր Հրանտ Թոխատյանը: Խոշոր նվիրատուների թվում են Սամվել Կարապետյանը, Սերգեյ Համբարձումյանը, Գագիկ Ծառուկյանը, Սեյրան Կարապետյանը, Գենադի Ստեփանյանը, Ալեքս Խաչատուրյանը, Միխայիլ Բաղդասարովը, Սամվել Ալեքսանյանը, Բարսեղ Բեգլարյանը, Տիգրան Արզաքանցյանը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, «Միքայել Վարդանյան» հիմնադրամը, «Էդուարդո Էռնեկյան» խումբը, «Հայռուսգազարդը», «Ղարաբաղ-տելեկոմը»: Դրամահավաքին նվիրաբերված գումարները եւ նվիրատուների անունները կհայտարարվեն նաեւ հեռուստամարաթոնի օրը, ինչպես նաեւ կհրապարակվեն մամուլում:

Անկարան դրական է արձագանքում Մեյենդորֆյան հռչակագրին

Թուրքական մամուլը դա պայմանավորում է ղարաբաղյան հակամարտության կարգավորման Ռուսաստանի եւ Թուրքիայի համակարգված ջանքերով

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Նոյեմբերի 2-ին մերձմոսկովյան Մեյենդորֆ դղյակում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները ստորագրեցին ղարաբաղյան հակամարտության կարգավորումը քաղաքական միջոցներով պայմանավորող հռչակագիրը: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի միջնորդությամբ ստորագրված Մեյենդորֆյան հռչակագիրը 1994-ի զինադադարի պայմանագրից հետո երկու կողմերի ստորագրությունը կրող առաջին քաղաքական փաստաթուղթն է:

«**Ազգը**» նախորդ համարում Արմեն Մանվելյանի ստորագրությամբ հակիրճ, բայց բովանդակալից ներկայացրել էր հռչակագիրը եւ անդրադարձել այն դրույթներին, որոնք կարող են զարգացումների վրա ազդել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Պարզապես ասենք, որ Իլհամ Ալիեւը ռազմատենչ հայտարարությունները շարունակելու դեպքում կհակասի ինքն իրեն, որովհետեւ ստորագրել է հռչակագիրը: Նրա հայտարարություններն արդեն ոչ թե ագրեսիվ նկրտումներում կխթանեն ադրբեջանցի հասարակությանը, այլ ընդամենը կխորացնեն Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը զենքի ուժով լուծելու Ադրբեջանի ղեկավարության հետեւողականության, առավել եւս կարողությունների նկատմամբ կասկածները:

Որքան էլ դա Հայաստանի տեսանկյունից դիտարկվի որպես դրական զարգացում, այնուամենայնիվ հռչակագրի ստորագրումը չի կարելի կողմերից որեւէ մեկի համար դիվանագիտական հաղթանակ համարել, որովհետեւ հռչակագիրը պաշտոնական Մոսկվայի հաղթանակն է: Ակնհայտ է, որ հռչակագրի ստորագրումը Հարավային Կովկասում կնպաստի Ռուսաստանի ազդեցության հետագա աճին, դրանով կընդգծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի նկատմամբ Մոսկվայի, իսկ այդ խմբի համանախագահների մեջ՝ ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նկատմամբ Ռուսաստանի գերակայությունը: Շնորհիվ այս ամենի Մոսկվան ի լուր աշխարհի ցույց կտա, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առանցքային դերը պատկանում է Ռուսաստանին:

Տես էջ 8

ԱԶԳ

Ընթացիկ

Լեւոն Մելիք-Շահնազարյան. «Ղարաբաղյան հարցը սեղանի շուրջը չի լուծվի»

«Մեյենդորֆյան հռչակագրի ստորագրմամբ սկսվել է ատացույցների պատերազմը»: Բնորոշման հեղինակը քաղաքագետ **Լեւոն Մելիք-Շահնազարյանն** է: Օրենքի շրջանակներում անցկացվող պայքարը, նրա հավաստմամբ, սկսվել է նոյեմբերի 2-ից, իսկ թե ով կհաղթի այս պատերազմում, քաղաքագետը կանխատեսումներ չարեց, սակայն նշեց՝ առավելությունները հայկական կողմինն են: «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման այս փուլում կհաղթի այն կողմը, որը գիտականորեն կկարողանա ապացուցել իր իրավացիությունը: Հռչակագրում նշված է, որ բանակցային գործընթացը շարունակվելու է միջազգային օրենքների սահմաններում: Սա կարեւոր է, որովհետեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ծնվել է միջազգային օրենքի տառին համապատասխան», ասաց Լեւոն Մելիք-Շահնազարյանը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման իրավական հիմքն ապացուցող փաստերն ու դրույթները, քաղաքագետի հավաստմամբ, իշխանությունները հաճախ չեն օգտագործում բանակցությունների ընթացքում: «Այս փուլում, սակայն, նման բացթողումները պետք է բացառվեն», վստահեցրեց քաղաքագետը:

Վերջինիս համոզմամբ, Մեյենդորֆյան հռչակագրում դրականն ավելին է, քան բացասականը: Նախ՝ առաջին անգամ կողմերը պարտավորվում են խնդրի լուծումը գտնել միայն խաղաղ ճանապարհով, երկրորդ՝ 1994 թվականից ի վեր սա առաջին փաստաթուղթն է, որ ստորագրում են երկու երկրների նախագահները, եւ որ ամենակարեւորն է, Ադրբեջանը չի ընդգծում տարածքային ամբողջականության հանգամանքը՝ հաստատելով, որ հարցը պետք է կարգավորվի մադրիդյան սկզբունքների հիման վրա: «Որքանով ես եմ ծանոթ մադրիդյան սկզբունքներին, այնտեղ նշված է ազգերի ինքնորոշման իրավունքի մասին», ասաց Լեւոն Մելիք-Շահնազարյանը: Բացասականը, քաղաքագետի հավաստմամբ, Լեռնային Ղարաբաղի նախագահի ստորագրության բացակայությունն է հռչակագրի ներքո: «ԼՂՀ-ի մեկուսացում է նկատվում: Փաստորեն, Հայաստանը հանդես է գալիս ոչ միայն որպես Արցախի անվտանգության երաշխավոր, այլեւ փոխարինող միջազգային ասպարեզում: Մինչդեռ հակամարտության սահմանը Արցախի եւ Ադրբեջանի միջեւ է», նշեց քաղաքագետը:

Միաժամանակ քաղաքագետը վստահեցրեց, որ այս քայլով տարածաշրջանում ամրապնդվեցին Ռուսաստանի դիրքերը: «Ռուսաստանն օգտագործեց պահը: ԱՄՆ-ն զբաղված էր ընտրություններով, իսկ Եվրոպան՝ տնտեսական խնդիրներով: Ճիշտ ժամանակն էր ամրապնդելու առաջատարի իր դիրքերը», ասաց քաղաքագետը:

Հռչակագրում ամրագրված յուրաքանչյուր կետի վերլուծությունները ու եզրակացությունները ներկայացնելով հանդերձ՝ քաղաքագետը համոզված է, որ խնդրի կարգավորումը սեղանի շուրջը դժվար թե տեղի ունենա: «Հարցը չի լուծվի այնքան ժամանակ, քանի դեռ տարածաշրջանը հետաքրքրում է Արեւմուտքին եւ Ռուսաստանին: Երբ տարածաշրջանն այլեւս կարեւորություն չներկայացնի նրանց համար, այնժամ Հայաստանն ու Ադրբեջանը, գուցե նաեւ պատերազմի դաշտում, լուծեն խնդիրը», ասաց քաղաքագետը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Կամ սկսել զրոյից, կամ էլ պատից իջեցնել հրացանը

1-ին էջից

Վերջին ամիսներին Մինսկի խմբի համանախագահների այն մշուշոտ հավաստիացումները, թե մի որոշակի փուլում Ղարաբաղը կարող է միանալ բանակցություններին, հռչակագրի ընդունմամբ կարծես թե քաղաքական անհրաժեշտությունից դուրս են համարվում: Իրո՞ք կար հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու՝ նախագահների մակարդակով պատրաստակամությունը վերահաստատելու անհրաժեշտություն. պատասխանը կարող ենք փնտրել միայն ենթադրությունների դաշտում: Վստահաբար կարող ենք շեշտել մի բան՝ վրաց-օսական պատերազմից հետո քաղաքական լուծումների օրակարգը փոխվել է, անշուշտ, ոչ պատերազմի օգտին: Բայց եթե Ռուսաստանի նոյեմբերերկուսյան նախաձեռնությունն այս համատեքստում է արժեւորվում, ապա ինչո՞ւ Հարավային Օսիայի ու Աբխազիայի օրինակով ԼՂՀ-ն եւս չի դիտարկվում որպես սուբյեկտ, որը իրական հակամարտության առանցքն է:

Մի ուշագրավ հանգամանք էլ՝ քաղաքական բառապաշարում «ղարաբաղյան հակամարտություն» ձեւակերպումը դարձել է «Լեռնային Ղարաբաղի հակամարտություն»: Սա արդեն ձեւաբանական որակում չէ, հատկապես որ քաղաքական տերմինաբանության մեջ ամեն բառ ունի ստույգ նշանակություն: Նախընթաց ձեւակերպումներում ֆորմալ առումը ընդհանրական էր, իսկ ներկա դեպքում կարծես թե Լեռնային Ղարաբաղը ընկալվում է իբրեւ աշխարհագրական տարածք, որի ճակատագրի շուրջը, միջնորդների մասնակցությամբ, պետք է պայմանավորվեն երկու հետխորհրդային հանրապետությունները՝ ի դեմս Հայաստանի ու Ադրբեջանի:

Դարձյալ հղում անենք ԼՂՀ արտգործնախարարի վերոհիշյալ հարցազրույցին: Գեորգի Պետրոսյանը մասնավորապես ասել է, որ եթե որոշվում է մի ժողովրդի ճակատագիր, ապա դա չպիտի նույնացնել «հարսնացուի համաձայնությունն անտեսելուն»: Այդ տեսակետից, ըստ ԱԳՆ ղեկավարի, Ղարաբաղը փեսացու է, եւ առանց նրա հետ հաշվի նստելու անհնար է լինելու որեւէ որոշում կայացնել: Գեորգի Պետրոսյանը նաեւ հավելել է, որ անբարո կլիներ ժամանակը հետ տալ, քանի որ Ադրբեջանի հետ հակամարտության ընթացքում մենք ե՛ւ ցեղասպանություն ենք ապրել, ե՛ւ կարողացել ենք լուծել ինքնապաշտպանության խնդիրը, դրանով իսկ լուծելով այսօր առկա խաղաղության խնդիրը:

Անկախ բոլոր եզրահանգումներից, անհամոզիչ է մնում միայն միջնորդություններով համընդունելի լուծում գտնելու հավանականությունը, հատկապես որ Ադրբեջանի նախագահը բացեիբաց հայտարարել է, թե 20 կամ 50 տարի հետո էլ իր երկիրը չի ճանաչի Ղարաբաղի անկախությունը: Վերջինս նույնիսկ չի նշում X ժամանակ անց նոր հանրաքվե անցկացնելու մասին, հավանաբար քաջ հասկանալով դրա սնանկությունը: Եվ հատկապես, եթե անգամ նման պայմանավորվածություն ձեռք բերվի, ապա օրինակելի ո՞ր ընտրական օրենսգրքով է իրականացվելու հանրաքվեն: Մասնավորապես, հարկ կլինի նախ պարզաբանումներ տալ, թե ո՞ւմ եւ ինչպիսի՞ երաշխիքներով է տեղի ունենալու հայերի ու ադրբեջանցիների համատեղ բնակեցումը Ղարաբաղում, ո՞ր երկրի քաղաքացիներն են լինելու նրանք, ի՞նչ գրանցում են ունենալու, որտե՞ղ են տեղակայվելու ադրբեջանցիների ընտրատեղամասերը եւ այլն: Հանրաքվեի կամ պլեբիսցիտի գաղափարը նույնքան սնանկ է, ինչքան սնանկ է թշնամաբար տրամադրված երկու հանրություններին մեկ սերնդի կյանքում հաշտեցնելու հիմնավորումը: Պատերազմի աչքերը ցավի խորքից են նայում, եւ դժվար է դրանց վրայից սրբել չչորացող արտասուքները:

Ադրբեջանի հետ համակեցության անհնարինության պայմաններում, որում թերեւս համոզվել են նաեւ միջնորդները, միակ ելքը Լեռնային Ղարաբաղը Հայաստանին հանձնե՞լն է մնում: Այս տարբերակի դեպքում էլ նույնիսկ ԼՂՀ-ի վերաբերմունքը կարեւոր է դառնում, իսկ եթե հաշվի առնենք, որ Ադրբեջանը հազիվ թե համաձայնի դրան, ապա ստիպված ենք կամ ինչպես ամեն ինչ սկսել զրոյից, կամ էլ պատից իջեցնել հրացանը:

Մեյենդորֆյան հռչակագիրն այս տեսանկյունից կարելի է համարել հակամարտության սառեցման նորացված փուլ, որից ով ով՝ բայց Ռուսաստանը շահում է տարածաշրջանում իր դերակատարության ամրապնդումով: Ավելի հավակնություններն առայժմ չեն կարող կատալիզատորացվել, որովհետեւ պարզ չէ դեռ, թե նախագահական ընտրություններից հետո ինչպիսի Ամերիկա է հայտնաբերվելու օվկիանոսից այն կողմ:

Ղարաբաղյան հակամարտության լուծմամբ հետխորհրդային տարածքում չեն ավարտվի հիմնախնդիրները: Դրանք տարբեր դրսեւորումներով կարտահայտվեն այնտեղ, որտեղ Ռուսաստանի շահերն ակնբախ են: Հյուսիսային մեր մեծ հարեւանը ընդգրկուն հայացքով է նայում փոքր տերությունների ձգտումներին, հուսելով իր հետ համաքայլ ընթանալու ողջամտությունը:

Ինչ է լինելու եռակողմ պայմանագրի ստորագրումից հետո: Թերեւս ոչ ավելին, քան բանակցությունների խաղաղ շարունակումը, քանզի այլընտրանքը կլինի ամեն ինչ մաքուր էջից սկսելը, կամ էլ հրացանը պատից իջեցնելը:

ԳՅՈՒՄՐԻ

Փորձելով դասեր քաղել ՏԻՄ ընտրություններից

Մեր երկրում յուրաքանչյուր ընտրություն հասարակությանը համախմբելու փոխարեն պառակտում է՝ հիասթափության խոր հետք թողնելով: Սակայն քաղաքական մշակույթի հաստատման առումով յուրաքանչյուր ընտրություն նաեւ դրական ազդեցություն է թողնում, հատկապես եթե կարողանանք դրանից հարկ եղած դասեր քաղել: Այս միտքը հայտնեց Գյումրու «Քաղաքական մշակույթի եւ համաձայնությունների զարգացման Շիրակ կենտրոն» ՀԿ-ի նախագահ, ԱԺՄ Շիրակի մարզային կառույցի պատասխանատու **Վահան Թումասյանը** երեկ հրավիրած մամուլի ասուլիսում, որի նպատակն էր գնահատական տալ հոկտեմբերի 26-ին Գյումրիում կայացած ՏԻՄ ընտրություններին: Վ. Թումասյանն այդ ընտրություններում Գյումրու համայնքային ավագանու անդամի թեկնածու էր, որը թեեւ պաշտոնապես ստացել էր մոտ 1200 ընտրողների ձայն, սակայն դա չէր բավարարել ընտրվելու համար: Համարելով, որ իրեն տրված ձայների մի մասը չի հաշվարկվել, տեղամասային ընտրական հանձնաժողովները դրանք ուղղակի գողացել են հօգուտ ուրիշների, նա այնուամենայնիվ դրական ձեռքբերում է համարում, որ այդքան մարդ կարեւորել եւ ի դեմս իրեն ձայն են տվել թեկնածուի գաղափարներին ու ծրագրերին:

Հայաստանյան ընտրությունների «աքիլլեսյան գարշապարը», հասարակական-քաղաքական աշխատանքի արդեն ոչ քիչ տարիների փորձ ունեցող Վ. Թումասյանի գնահատմամբ, տեղամասային ընտրական հանձնաժողովներն են, դրանց կազմում ընդգրկվելու ընդունված մեխանիզմները ու գործնական չափանիշները, որոնք էլ պայմանավորում են հանձնաժողովականների «գործունեությունը»: Մասնավորապես ՏԻՄ ընտրություններում դրանք իրենց նախագահների գլխավորությամբ «անմիջապես որոշում են իրավիճակը, թե համայնքի ղեկավարի թեկնածուներից ով է հաղթողի դերում եւ վերջինս ավագանու անդամի թեկնածուներից ում է պաշտպանում, որից հետո սկսվում է ձայների բաշխումը»: Ուստի օրենսդիրներին դիմելով ընտրական օրենքում որոշակի փոփոխություններ կատարելու մի քանի գրավոր առաջարկություններով, Վ. Թումասյանն առաջարկում է ՏԻՄ ընտրություններում առաջին հերթին ամփոփել ավագանու անդամների, եւ միայն դրանից հետո՝ համայնքապետի ընտրությունների արդյունքները, իսկ 50 հազարից ավելի ընտրողներ ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի եւ ավագանու ընտրությունները առանձնացնել ու անցկացնել առնվազն վեցամսյա ժամանակային տարբերությամբ: Նաեւ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովներին տալ միայն քվեարկությունը կազմակերպելու եւ անցկացնելու լիազորություններ, քվեարկության արդյունքների ամփոփումը տեղափոխել ընտրատարածքային հանձնաժողովներ՝ ավելացնելով ինչպես արդյունքների ամփոփման, այնպես էլ վերահաշվարկի պահանջի մասին դիմումների եւ վերահաշվարկի համար նախատեսված ժամանակը: Թերեւս կարելի է համաձայնել նաեւ արված մեկ այլ՝ քվեաթերթիկում բոլորին դեմ քվեարկելու համար նախատեսված տողը վերականգնելու առաջարկությանը:

Բանախոսը կարեւոր համարեց հանրապետության երկրորդ քաղաքում լեգիտիմ ավագանի ունենալը, որի համար հետագա պայքարը իր եւ գաղափարակիցների պարտքն է համարում: Խոսքը, նաեւ, Գյումրիում տեղական հանրաքվեի միջոցով ավագանու նոր ընտրություններ պահանջելու գործընթաց սկսելու մասին է: Դա հնարավո՞ր է...

Գ. Մ.

Ուղղաթիռը շրջվել է

ՀՀ ՊՆ մամլո ծառայությունը տեղեկացնում է, որ նոյեմբերի 4-ին ՀՀ զինված ուժերին պատկանող Մի-24 ռազմական ուղղաթիռը Երեւանի Էրեբունի օդանավակայանում ուսումնամարզական պլանային հերթական թռիչքի պատրաստվելիս շրջվել է եւ վթարի ենթարկվել, զոհվել է այդ պահին թռիչքուղու վրա գտնվող օդաչու, կապիտան Արշակ Գագիկի Ներսիսյանը: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, կատարվում է հետաքննություն: ՀՀ պաշտպանության նախարարությունը խոր վշտով ցավակցում է կապիտան Ա. Ներսիսյանի հարազատներին եւ մտերիմներին:

Ջհանգիրյանի գործի քննությունը հետաձգվել է

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Ժորա Վարդանյանի նախագահությամբ, դարձյալ հետաձգել է գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրյանի գործի քննությունը: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրեց ՀՀ վճռաբեկ դատարանի մամուլի քարտուղար Ալինա Ենգոյանը, նիստում շարունակվել է վկաների հարցաքննությունը: Դատական հաջորդ նիստը կկայանա նոյեմբերի 6-ին: Հիշեցնենք, որ Գ. Ջհանգիրյանը ձերբակալվել է այս տարվա փետրվարի 23-ին եւ մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակիցների նկատմամբ կյանքի եւ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու մեջ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ըստ Տեր-Պետրոսյանի՝ Ռուսաստանը կսկսի, Արեւմուտքը կավարտի ղարաբաղյան կարգավորումը



Լեւոն Տեր-Պետրոսյանը, ինչպես եւ խոստացել էր, երեկ արձագանքեց Մոսկովյան հռչակագրին: Նախ նա հավատարիմ մնաց ինքն իրեն եւ ի հեճուկս հարցը քնեցնելու վերաբերյալ այլ կանխատեսումների՝ իր հակադիր կանխատեսումն արեց, թե մոտակա ամիսներին մեզ սպասում են Ղարաբաղի եւ հայոց պետականության ճակատագրի հետ կապված կարեւորագույն իրադարձություններ, որոնք այս հանգրվանում երկրորդական են դարձնում ներքաղաքական խնդիրները, ապա եւ Մոսկովյան հռչակագիրը գործընթացի կարեւորագույն զարգացումներից մեկը դիտեց:

Նա, իսկ նա իսկապես ղարաբաղյան խնդրի պարագայում ամենաիրազեկ, իր խոսքերով՝ «բոլոր ծալքերին ծանոթ» փորձագետ է, համարում է, որ այս փաստաթուղթը այսբերգի գագաթն է միայն եւ նրա տակ ընկած է շատ ավելի հանգամանալից մի արձանագրություն՝ հեշտ գուշակելի բովանդակությամբ: Հռչակագրի առաջին կետի՝ միջազգային իրավունքներով եւ նորմերով, ինչպես նաեւ դրանց շրջանակներում ընդունված որոշումների եւ փաստաթղթերի հիման վրա կարգավորման՝ ձեւակերպման երկրորդ հատվածը մտահոգիչ է համարում, քանի որ, նրա կարծիքով, այդ փաստաթղթերի տակ Ադրբեջանի պահանջով նկատի են առնված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 62/243 եւ ԵԽԽՎ 1614 բանաձեւերը, որոնցում ճանաչվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ պահանջվում հայկական զորքերի անվերապահ դուրսբերումը Ղարաբաղին հարակից ադրբեջանական տարածքներից:

Հռչակագրի 2-րդ կետում արձանագրված դրույթի (թե կարգավորման հիմքում ընկած է լինելու Մինսկի խմբի համանախագահության 2007-ի նոյեմբերի 29-ի մադրիդյան առաջարկը) առթիվ հիշեցնում է մադրիդյան առաջարկի գաղափարախոսությունը՝ միջազգային իրավունքի երկու՝ տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման ներդաշնակում:

Տեր-Պետրոսյանը հռչակագրի երրորդ կետից եզրակացնում է, թե հակամարտության կողմերի նոր ձեւաչափ է սահմանվում՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ուղիղ երկխոսության միջոցով, իսկ ԼՂՀ-ն, այդպիսով, որեւէ դերակատարում չի ունենալու իր բախտը վճռող բանակցությունների հետագա գործընթացում:

Հայաստանն ու Ադրբեջանը, փաստորեն, այս փաստաթուղթը ստորագրելով՝ իրենց համաձայնությունն են տվել մադրիդյան առաջարկին, գտնում է Տեր-Պետրոսյանը՝ հիշեցնելով, որ Մինսկի խմբի համանախագահության երեք նախորդ պաշտոնական առաջարկները՝ փաթեթային, փուլային եւ ընդհանուր պետության, հանվել են օրակարգից, քանի որ հակամարտող կողմերի միահամուռ հավանությանը չեն արժանացել. առաջին երկուսը մերժվել են Ղարաբաղի, վերջինն Ադրբեջանի կողմից, քիվեսյան առաջարկը եւս Ադրբեջանը մերժել է: Իսկ Սարգսյանի եւ Ալիեւի ստորագրությունները Մոսկովյան հռչակագրի տակ ղարաբաղյան կարգավորման ավարտական փուլի սկիզբն են ազդարարում, ենթադրում է Տեր-Պետրոսյանը:

Մի խոսքով, նա կանխատեսում է, որ մոսկովյան հանդիպումը շրջադարձային, բայց կարգավորման գործընթացի միայն սկիզբն է, որը շարունակվում է Եվրոպայում ու կավարտվի դեկտեմբերին Միացյալ Նահանգներում: Նրա կարծիքով, սկիզբը մատուցվել է Ռուսաստանին, այն էլ՝ առեւտույթ, իսկ վերջակետը դնելու է Արեւմուտքը: Եվ ենթադրում է, թե Սարգսյանն ու Ալիեւը մոսկովյան հանդիպմանը կամ հարկադրաբար են մասնակցել, եթե ոչ՝ անթաքույց դժկամությամբ, բայց ի վերջո տարբեր նկատառումներով նախընտրելու են Արեւմուտքի միջնորդությունը: Իսկ Մինսկի խմբի անհրաժեշտությունից որքան շատ են խոսում, այնքան այնտեղ եղած տարաձայնությունների մասին կասկածները խորանում են, ՄԽ-ն, ըստ նրա, արտաքին քողածածկույթ է՝ միջնորդ երկրների նպատակների իրագործումը դիվանագիտական պատշաճությամբ ապահովելու համար:

Մեր կողմից հիշեցնենք, որ չնայած ղարաբաղյան խնդրի նրբություններին տիրապետելու իր համբավին (նախկին պաշտոնի իրավասություններում), Տեր-Պետրոսյանի ենթադրությունների եւ կանխագուշակությունների միայն մի փոքրիկ մասն է իրականություն դարձել: Այնպես որ հուսանք, որ ԼՂ հիմնախնդրի արագ լուծման խնդրում էլ նա կսխալվի, համենայն դեպս՝ սթափ վերլուծողներից շատ քչերն են այդպիսի արագ լուծման հնարավորություն մատնանշում:

Արժե մեջբերել Տեր-Պետրոսյանի գործընկեր խորհրդարանական «Ժառանգությունից» **Վարդան Խաչատրյանի** տեսակետը՝ նույն հռչակագրի վերաբերյալ, տարբերություններն ու Տեր-Պետրոսյանի սիրած «նրբասացությունն» աչքն ի տես է: Վ. Խաչատրյանը հռչակագիրն ուրվագիծ եւ ոչ թե գերճշգրիտ պայմանավորվածությունների փաստաթուղթ համարեց, որտեղ կողմերից յուրաքանչյուրի շահերը շոշափված են, բայց եւ՝ յուրաքանչյուրի սպասածի մի հատվածն են ներկայացնում. «Առաջին հերթին դա թերեւս Ադրբեջանի ամբիցիաների շրջանակն է՝ մադրիդյան պայմանավորվածությունների առումով, այսինքն՝ նրանց դա է ձեռնտու, դա է ընկալելի՝ որպես տարածքային ամբողջականության գերակայության հնարավորություն այս բանակցային գործընթացում: Հայաստանի մասով՝ ո՛չ պատերազմական գործողություններով, ո՛չ բռնի ուժի միջոցով հետագա զարգացումների ընթացքն է կարեւորվում, բացառումը պատերազմի, հնարավոր ռազմական կոնֆլիկտի: Եվ վերջապես երրորդ պահը վերաբերում է միջազգային երաշխիքներին, որոնց ներքո պատկերացվում է Ռուսաստանի գերակայությունը տարածաշրջանում, քանի որ երրորդ ստորագրող կողմը Ռուսաստանն է»: Ըստ Վ. Խաչատրյանի՝ եթե վտանգներ պարունակում է այս փաստաթուղթը, ապա միայն հետագա զարգացումների առումով. պետք է տեսնել, թե հետագայում ինչպիսի զարգացումներ կլինեն, նախապես վերլուծել չի կարելի: Իսկ ընդհանրապես՝ հռչակագիրը հավասարակշիռ փաստաթուղթ է, բայց նաեւ այնտեղ խոսվում է փաստաթղթերի մասին, որոնցից ընդհանրապես տեղյակ չենք: «Կարո՞ղ են Ռուսաստանին արագորեն իր տեղը ցույց տալ» մեր հարցին Վ. Խաչատրյանն արձագանքեց. «Հավատացնում եմ Ձեզ՝ այնպիսի տերություն, ինչպիսին Ռուսաստանն է, տեղ ցույց տալը ոչ միայն հեշտ չէ, այլեւ անհնարին կլինի»:

Մ. Խ.

Հանրապետությունում հանցագործությունների դեպքերը աճել են, բացահայտումները՝ նվազել

Երեկ լրագրողների հետ հանդիպեց ՀՀ ոստիկանության լրատվության վարչության պետ, ոստիկանության գնդապետ **Սայաթ Շիրինյանը** եւ ներկայացրեց 2008-ի 9 ամսում ՀՀ-ում հանցավորության վիճակը եւ դրա դեմ տարվող պայքարի արդյունավետության արդյունքները: Նա տեղեկացրեց, որ ՀՀ-ում գրանցվել է 6825 հանցագործության դեպք, որը 315 դեպքով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Հանցավորության մակարդակը բարձր է միայն Երեւանում՝ 31,4 տոկոս, որից հետո Գեղարքունիքում՝ 11,1, Սյունիքում՝ 12,7 եւ Արմավիրում՝ 13,1 տոկոս: 281 դեպքով աճել են ծանր հանցագործությունները (2571-ից 2852 է դարձել), իսկ 6-ով առանձնապես ծանրերը (136-ից դարձել է 142): Աճ է արձանագրվել սպանության (51-ից՝ 62), սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների (25-ից՝ 49), այդ թվում՝ բռնաբարության եւ բռնաբարության փորձի դեպքերով (5-ից՝ 14): Նվազում է արձանագրվել սպանության փորձերով (25-ից՝ 23) եւ դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու (380-ից՝ 370) դեպքերով: Աճ է արձանագրվել նաեւ ավազակության (55-ից՝ 111), կողոպուտի (88-ից՝ 157), գողության (2103-ից՝ 2204) եւ յուրացման կամ վատնման (52-ից՝ 63) դեպքերով: Աճ է գրանցվել քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թվաքանակում՝ 8,8 %, իսկ կանանց թիվը դրանցում աճել է 8,2 %-ով (340-ից՝ 368): Անչափահասների կատարած հանցագործությունների թիվը նվազել է 51-ով (265-ից՝ 214): Վարույթում գտնվող քրեական գործերի բացահայտումը նվազել 3,0 %-ով (71,8 %-ից 68,8 %), քրեական հետախուզման գծով՝ 2,3 %-ով, ծանր հանցագործություններով՝ 13,9 %-ով եւ այսպես շարունակ:

Անցած 9 ամսում տարբեր կարգապահական խախտումներ թույլ տալու համար ոստիկանության 164 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժի, 12-ը՝ զգուշացվել են պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին, 3-ի պաշտոնը եւ 4-ի կոչումը իջեցվել է մեկ աստիճանով, իսկ 12-ն ազատվել են աշխատանքից:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ՓԱՍՏԱՐԿ» ԱԿՈՒՄԲՈՒՄ

«Ռուսաստանը թերեւս փորձում է սիրաշահել Ադրբեջանին»

Նախկին ՀՅԴ-ականի կարծիքով՝ Ղարաբաղը Ռուսաստանի համար գործիք կարող է դառնալ

Նոյեմբերի 2-ին Մոսկվայում տեղի ունեցած եռակողմ հանդիպումը եւ Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը այժմ պետք է դիտարկել տարածաշրջանային զարգացումների համատեքստում: Երեկ «Փաստարկ» ակումբում նման կարծիք արտահայտեց քաղաքագիտությամբ զբաղվող նախկին հյուպատոս, «Ակումբ» վերլուծական կենտրոնի ղեկավար Ռուբեն Հակոբյանը: Ըստ Հակոբյանի՝ Ռուսաստանը թերեւս ցանկանում է Ղարաբաղի ուղղությամբ զարգացնել իր հաջողությունը, որ արձանագրել է վրաց-օսական հակամարտության ընթացքում: Ռուբեն Հակոբյանը ասում է, որ Հայաստանը թերեւս ճիշտ եզրակացություն չի արել այդ հակամարտությունից, քանի որ դրա գլխավոր դասը ոչ թե այն է, որ պատերազմը հակամարտություն լուծելու անհեռանկար գործիք է, այլ այն, որ Ռուսաստանը ցույց տվեց իր շահը ամեն գնով, անգամ պատերազմի գնով հետապնդելու հաստատակամությունը:

Ռուբեն Հակոբյանը նշում է, որ Ռուսաստանն այդ նախաձեռնությամբ սկսում է Ղարաբաղի հակամարտության կարգավորման նոր փուլ, որով քայլ առ քայլ փորձելու է վերականգնել եւ ամբողջացնել իր ազդեցությունը տարածաշրջանում:

Սանկտ Պետերբուրգում Հայաստանի նախկին հյուպատոսն ասում է, թե Ռուսաստանը թերեւս փորձում է սիրաշահել Ադրբեջանին, քանի որ իր էներգահումքային ռեսուրսով կարեւոր երկիր է, ու այդ սիրաշահման գործընթացում Ռուսաստանի համար կարող է գործիք դառնալ նաեւ Ղարաբաղը: Ռուբեն Հակոբյանը անդրադառնում է նաեւ մադրիդյան սկզբունքներին, ասելով, որ դրանցով փորձ է արվում համադրելու տարածքային ամբողջության եւ ինքնորոշման սկզբունքները: Իսկ եթե դրանք համադրվում են, ապա, ըստ Ռուբեն Հակոբյանի, ինքնորոշման սկզբունքը հետաձգվում է եւ թերեւս գործընթացի ինչ-որ փուլում կգա տարածքներից հայկական զինուժի դուրսբերման ժամանակը:

Միեւնույն ժամանակ, բանախոսը հայտարարում է, թե Հայաստանում չի լինի մեկը, որ չարախնդա այդ հարցում Հայաստանի իշխանության ձախողման վրա, քանի որ իշխանության ձախողումը տվյալ դեպքում կարող է լինել ամբողջ հայ ժողովրդի ձախողումը: Նա փաստում է նաեւ, թե երբ տարածաշրջանում համընկնում են Թուրքիայի եւ Ռուսաստանի շահերը, իսկ ըստ Ռուբեն Հակոբյանի, այժմ համընկնում են, ապա Հայաստանը միշտ տուժում է դրանից:

Նախկին հյուպատոսի կարծիքով, մտահոգիչ է Հայաստանի իշխանական որոշ գործիչների հիացական արձագանքը Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների ստորագրած հռչակագրի վերաբերյալ: Ըստ Ռուբեն Հակոբյանի, հռչակագիրը նախ չունի որեւէ իմպերատիվ, այսինքն՝ պարտադիր բնույթ, եւ դրանից բացի, պատմության մեջ շատ դեպքեր են եղել, որ որեւէ համաձայնագրից կամ պայմանագրից հետո անմիջապես սկսվել է պատերազմ: Այդ դեպքում Ռուսաստանը կարող է առաջնորդվել ոչ թե հավերժ բարեկամի կամ թշնամու, այլ հավերժական շահի նշանաբանով:

Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակը բացարձակապես անհամարժեք է արտաքին իրադրությանը եւ այդ թույլ իմունիտետով, որ գալիս է ներքին անհամարժեք վիճակից, Հայաստանն ի վիճակի չէ արտաքին քաղաքական հարթության վրա կատարելու լուրջ քայլեր:

Ռուբեն Հակոբյանը որպես կարեւորագույն ներքին խնդիր է դիտարկում կոռուպցիան, եւ հայտարարում, որ Հայաստանում կոռուպցիայի թիվ մեկ բացիլակիրը Ազգային ժողովն է, իհարկե, առանձին բացառություններով:

Իրականությանը համապատասխանո՞ւմ է մամուլի հրապարակած այն տեղեկությունը, թե Ռուբեն Հակոբյանը պատրաստվում է կուսակցություն հիմնել նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ: Լրագրողների այդ հարցին վերջինս պատասխանեց, թե Վարդան Օսկանյանի հետ գրեթե մշտական շփման մեջ է, քննարկում են տարբեր հարցեր, սակայն կուսակցության հիմնադիր լինելու կամ նման մտադրության մասին տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը:

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆8.30-«Կոնգրես» հյուրանոցում կկազմակերպվի ԱՄՆ նախագահական ընտրություններին նվիրված միջոցառում: Լրագրողները հրավիրվում են հետեւելու եւ լուսաբանելու ընտրությունների ընթացքը:

◆10.00-ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի կունենա Արեւելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով:

◆10.00-«Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում ԱՄՆ ՄԶԳ Հայաստանում ջրային ոլորտի կառավարման ինստիտուցիոնալ եւ օրենսդրական հզորացման ծրագիրը կազմակերպում է Հայաստանի ջրային ռեսուրսների ատլասի շնորհանդեսը:

◆11.00-«Նովոստի» մամուլի կենտրոնում տեղի կունենա Կովկասի ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանի մամուլի ասուլիսը:

◆11.00-«Աթալբեկյանի» անվան առողջապահության ազգային ինստիտուտում տեղի կունենա ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջոցառում:

◆12.00-«Ուրբաթ» ակումբի հյուրն է ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը: Հյուրը կխոսի ԼՂՀ խնդրի կարգավորման գործընթացի եւ Հայաստանի, Ադրբեջանի ու Ռուսաստանի նախագահների մոսկովյան բանակցությունների արդյունքների մասին:

◆12.00-Փաստաբանների պալատում տեղի կունենա փաստաբան Վարդան Զուռնաչյանի, գործով անցնող Անդրանիկ Այվազյանի եւ նրա ներկայացուցիչ Հակոբ Ճառոյանի ասուլիսը՝ ի պատասխան Կարեն Մեջլումյանի հոկտեմբերի 31-ի ասուլիսի:

◆12.00-Ազգային ժողովի նիստերի դահլիճում տեղի կունենան լսումներ՝ «Գիտությունը եւ կրթությունը ազգային անվտանգության համատեքստում» թեմայով:

◆12.00- Վերահսկիչ պալատում տեղի կունենա Իշխան Զաքարյանի ասուլիսը:

◆12.00-«Հայելի» ակումբում տեղի կունենա հանդիպում ԱԺ պետաիրավական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի հետ:

◆13.00-«Հայելի» ակումբի հյուրերն են Հրանտ Տեր-Աբրահամյանը եւ Սուրեն Սուրենյանցը:

◆13.00-Բոյաջյան ցուցասրահում կբացվի գրաֆիկական ցուցահանդես:

◆14.00-Ազգային գրադարանում տեղի կունենա Միքայել Ամիրբեկյանի 85-ամյակին նվիրված միջոցառում:

Ակնարկ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի անցած ճանապարհի

ARMENPRESS

Գիտելիքը՝ հասարակության հիմնական արժեք

2008-ի աշնան վերջին ամսվա առաջին օրերին Հայաստանի ամերիկյան համալսարանն իր պատմության լավագույն էջերն է գրում: 1991-ի սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության հռչակման օրվա հետ համալսարանի բացումը պարզ համընկնում չէր: Ըստ էության, այն խորհրդանշում էր ապագա հասարակության կերտման ու կենսականությունն ապահովող ազատ մտածողության ու բարձր կրթության իր հավատամքն ու կոչումը: Այս 17 տարիներին համալսարանն անցավ բարեխիղճ նվիրումի ճանապարհ. ամենահամառոտ արձանագրումն իսկ վկայությունն է վերոնշյալի՝ ուսումնական ծրագրերի հետեւողական ընդլայնում՝ նոր մասնագիտությունների ընդգրկումով, ուսումնասիրություն-հետազոտությունների նոր ծրագրեր, կենտրոններ (Կարո Մեղրիկյանի անվ. կանխարգելիչ ակնաբուժական ինստիտուտի գործունեություն ՀԱՀ կենտրոնում, արեւային էներգիայով գործող ցուցադրական մոդելի կիրառում), մշակութային-ազգային նախագծեր (Հայ մատենագրության թվային գրադարանի ստեղծում), Հայաստանում առաջին անգամ ուսանողական վարկի տրամադրում, անվանական կրթաթոշակի հաստատում, մի շարք հանրօգուտ ծրագրեր, ինչպես Թրփանջյան գյուղական համայնքների ծրագիրը Շիրակում, Տավուշում եւ ԼՂ-ում: Թրփանջյան ընտանեկան հիմնադրամի կրթաթոշակի ծրագիրը՝ ուղղված ՀԱՀ-ի եւ Հայաստանի այլ բուհերի սոցիալապես անապահով եւ ծնողազուրկ ուսանողների օգնությանը, տարաբնույթ դասընթացներ, կոնֆերանսներ եւ այլն, եւ այլն: Այս հետեւողական եւ նպատակային գործունեության արդյունքում՝ ԱՄՆ դպրոցների եւ քոլեջների արեւմտյան ասոցիացիայի կողմից 7 տարի՝ առավելագույն ժամանակահատվածով հավատարմագրումով (2007թ.) համալսարանը տարածաշրջանում եզակի կրթական հաստատության կարգավիճակ, հեղինակություն ու համբավ է ձեռք բերում:

«Փարամազ Աւետիսեան» մասնաշենքի տնօրհնէք եւ բացում

Եվ ահա հերթական նվաճումը, որն ավելի լայն հնարավորություն է ստեղծելու համալսարանի գործունեության համար, «Փարամազ Աւետիսեան» քառահարկ, հոյակերտ մասնաշենքի կառուցման ավարտը: Արտաքին եւ ներքին ճարտարապետական արդիական ոճավորումով՝ քարի, ապակու եւ մետաղի համադրումով, շինարարական նորամուծություններով շենքը լավագույն պայմաններն է առաջարկում ուսանողությանը՝ արդիական տեխնիկական հագեցվածությամբ, ինտերնետային հաղորդակցության նորագույն սարքավորումներով, հեռուստացման հնարավորությամբ. մշտապես օդափոխվող դասասենյակներ, մարզասրահ, լուսավոր պատկերասրահ, 195 տեղանոց «Ալեք եւ Մարի Մանուկեան» հարմարավետ սրահ եւ այլ հարմարություններ:

Կարծում եմ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի հաջողությունների գաղտնիքը բոլոր ժամանակների համամարդկային արժեքներ դավանելու նրա ճշմարիտ սկզբունքի մեջ է, բարոյական այն օրենքների կիրառման, որոնք երբեք չեն հնանում: Այս զգացողությունն ինձ փոխանցվում է ամեն անգամ՝ համալսարանի ավարտական կամ այլ հանդիսություններին ներկա գտնվելիս եւ այս ամբիոններից հնչող պատասխանատու անձերի, մասնավորապես նախագահ Հարություն Արմենյանի երախտիքի, գնահատանքի հանդարտ ելույթներն ունկնդրելիս:

Նորակառույցի նախասրահում այցելուին դիմավորում է Փարամազ Ավետիսյանի արձանը, որի բացման արարողությանը հետեւեց տնօրհնեքի հոգեւոր կարգը՝ Ամենայն հայոց հայրապետ Գարեգին 2-րդի աղոթքով ու բարեմաղթանքի օրհնությամբ առ բոլոր նվիրատուների ազնիվ բարերարությունը, համալսարանի նախագահի նվիրյալ աշխատանքը, ճարտարապետի եւ շինարարների բարեխղճությունը, Հայաստանի կառավարության ու իշխանության բարեհաճությունը:

Ապա վարչապետ Տիգրան Սարգսյանն իր այս ներկայությունը համալսարանում բացառիկ հնարավորություն համարեց՝ եւս մեկ անգամ կարեւորելու կրթական համակարգը: Թե ինչպիսին կլինի աշխարհը 20 տարի անց, թերեւս դժվար է ասել, սակայն, ըստ վարչապետի. «Ակնհայտ է, որ աշխարհի հետ համընթաց գնալու երաշխիքը գիտելիքահենք հասարակություն ունենալն է, որովհետեւ XXI դարի հիմնական արժեքը գիտելիքն է»: Հայաստանի ամերիկյան համալսարանի փորձը վկայություն է մեր հասարակության մեջ առկա կրթական ներուժի, ուստի եւ այդ փորձը կարող է ուսանելի եւ կիրառելի լինել մեր երկրի մյուս կրթարանների համար: Ըստ այդու՝ ակնկալվեց ՀԱՀ-ի աջակցությունը կառավարության կրթական բարեփոխումների ծրագրերին, որ կնպաստի ստեղծելու այնպիսի հասարակություն, որտեղ կարեւորագույն արժեք կհամարվի գիտելիքը, իսկ դրա կրողը՝ պատվավոր քաղաքացի: ՀԱՀ-ի կրթական ծրագրերում նոր մասնագիտությունների (մակրոտնտեսության ոլորտ) ընդլայնման հարցում վարչապետը համաֆինանսավորման պատրաստակամություն հայտնեց: Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նա Մովսես Խորենացի մեդալով պարգեւատրեց բարերարներ Ջերի Թրփանջյանին եւ Էդ Ավետիսյանին:

ՀԱՀ-ի նորակառույց շենքի նախագիծը իրականություն դարձավ ԱՄՆ-ից Ավետիսյան ընտանիքի առատաձեռն նվիրատվությամբ: Իր ելույթում Էդ Ավետիսյանը վերհիշեցրեց ներկաներին համալսարանի հիմնադրման օրերը, որ համընկան երկրի եւ ժողովրդի համար ծանրագույն տարիներին եւ եղան հետագա ամեն տեսակի մարտահրավերներին դիմակայելու փորձության շրջան: Հիմնադիրների, դասախոսական կազմի եւ ուսանողության կամքն ու համառությունն էլ դարձավ համալսարանական ապագա հաջողությունների առհավատչյան:

Գոհունակությամբ ներկայացնելով շինարարական ընթացքը՝ նա շենքի որակը գնահատեց գերազանց՝ առանձնակի ընդգծելով շինարարական ծրագրի ղեկավար, արտերկրում գնահատված փորձառու մասնագետ Ֆարաժ Երեցյանին եւ բազմաթիվ կառույցների ու նախագծերի հեղինակ, միջազգայնորեն հայտնի ճարտարապետ Ռոնալդ Ալթունին:

ՀԱՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Ռորի Հյումը հիացական խոսքերով դիմեց ներկաներին՝ նման կարճ ժամանակամիջոցում եւ քիչ գումարներով այսպիսի հրաշալի կառույցի հաջող իրականացման առիթով՝ նույնիսկ Կալիֆոռնիայի շատ համալսարանական շենքերի համեմատությամբ՝ առավելություններով: Նա գնահատեց ՀԱՀ-ի գործունեությունը՝ որպես ամերիկյան կրթական մոդելի հայաստանյան հաջող փորձ «հարգանքի արժանի մի հասարակության համար, որն ունի հնագույն քրիստոնեական քաղաքակրթություն՝ հիասքանչ ու տոկուն»:

Ավարտին համալսարանի նախագահ Հարություն Արմենյանը, որ նաեւ օրվա հանդիսավարն էր, երախտագիտության խոսքեր հղեց ՀԱՀ-ի կայացմանն աջակցող ու զարգացմանը նպաստող բոլոր հովանավորներին, Հայաստանի իշխանություններին ու կառավարությանը, Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, Կալիֆոռնիայի համալսարանին, ԱՄՆ կառավարությանը, բարերարներին, դասախոսական կազմին, ուսանողներին, ճարտարապետ-շինարարներին՝ անուն առ անուն թվարկելով նաեւ բոլոր նրանց, ովքեր խոնարհաբար եւ աննկատ են գործել: Հանդիսությանը հետեւեցին հյուրասիրություն, տոնական համերգ եւ հրավառություն:

2008-ի ավարտական արարողություն

Հաջորդ օրը համալսարանը կատարեց ամենամյա ավարտական ավանդական արարողությունը, որը սկսվեց ՀՀ-ի եւ ԱՄՆ-ի օրհներգերով եւ Անուշավան եպս. Ժամկոչյանի օրհնությամբ: Նախագահ Հարություն Արմենյանը ողջունեց պատվարժան հյուրերին (ներկա էին համալսարանի հիմնադիրներ Միհրան Աղբաբյանը, Արմեն Տեր-Կյուրեղյանը, ՀԱՀ հոգաբարձուների խորհրդի անդամները) եւ բոլոր ներկաներին: Խոսեց համալսարանի կրթական ծրագրերի առավելությունների, դրանց փոփոխվող, զարգացող կառուցակարգային մոդելի, մտածողության մեջ ազատության, այլընտրանքային մոտեցումների, դոգմաների դեմ պայքարի անհրաժեշտության մասին, որի շնորհիվ է հնարավոր ստեղծել ազատ մրցակցային զարգացման միջավայր:

Կալիֆոռնիայի համալսարանի ողջույնը փոխանցեց համալսարանի պատվավոր փոխնախագահ Ուիլյամ Ֆրեյզերը: Ավարտական հանդեսի ուղերձներով ելույթ ունեցան Ռորի Հյումը եւ ՀՀ ԿԳ նախարար Սպարտակ Սեյրանյանը: Նա մեկ անգամ եւս ընդգծեց գիտելիքի դերն արժանապատիվ հասարակության ձեւավորման գործում եւ նախարարության «Ոսկե մեդալ»-ով պարգեւատրեց ՀԱՀ հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ Ուիլյամ Ֆրեյզերին, Ռորի Հյումին, Կարոլ Ասլանյանին, Ջոն Մարտինին, Լայման Պորտերին, Կարլ Փիսթերին: Հրաժեշտի տպավորիչ խոսքեր ասացին շրջանավարտներ Մարինե Անտոնյանը եւ Արեփիկ Անափիոսյանը: Հայտարարվեց ամենամյա Բալյան մրցանակակրի անունը՝ Արուսյակ Հարությունյանը ճանաչվեց լավագույնը: Ապա համալսարանի նախագահ Հարություն Արմենյանը եւ համապատասխան դեկանները մագիստրոսի կոչում շնորհեցին համալսարանի 2008-ի բոլոր շրջանավարտներին: Առողջական խնդիրներով Գերմանիայում գտնվող Գոհար Բաղալյանի մագիստրոսի վկայականը ստացավ նրա հնգամյա դուստրը՝ Էլենը:

«Խոնարհ հերոսներ»

Նորակառույց մասնաշենքի նախասրահում դրված Փարամազ Ավետիսյանի արձանին կից պատի հուշագրության մեջ կյանքի փորձառությամբ իմաստավորված խոսքեր կան՝ մեր ապրած օրերի իրական նշանակությունը գնահատող. «Կը հուսանք, որ այցելուն ու դիտողը կը ներշնչուի այս պարզ մարդուն եւ նման անհամար մարդոց օրինակէն, մարդիկ, որոնց անունները չեն յիշուիր պատմութեան էջերուն մէջ, համեստ մարդիկ, որոնք կատարած են ազնուութեան արտակարգ գործեր»: Առանց ակնկալիքի իրենց ժամանակը, տաղանդն ու կարողությունները այլոց բաշխած մարդկանց խոնարհությունը արժեւորող խոսքերով ավարտեց ՀԱՀ-ի նախագահ Հարություն Արմենյանը օրվա հանդիսությունը՝ երախտագիտությամբ խոնարհ այն հերոսներին, որոնք ապրում են աննկատ, բայց իրենց հոգու թելադրանքի բարի գործերով տանելի դարձնում մարդկային այս անցողիկ ու դժվար կյանքը, տեսանելի դարձնում նրանց ապագան... Այդպիսի խոնարհ հերոս էր Փարամազ Ավետիսյանը:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՀ-ի նախագահ Հարություն Արմենյանը Ամենայն հայոց հայրապետի եւ ՀՀ վարչապետի կողքին

Ձախից աջ՝ Հարություն Արմենյան, Ռորի Հյում, Արմեն Աղբաբյան, տեր եւ տիկին Ավետիսյաններ

Փոքրիկ Էլենը մագիստրոսական կոչում ստացողների շարքում...

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Մ. Նահանգներ-Իրան հարաբերությունները

«Արմինյն միռոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 25-ի համարից Էդուարդ Պ. Ջերեջյանի ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածը առաջինը լույս է տեսել «Վաշինգտոն փոստում»: Ջերեջյանը հիմնադիր-տնօրենն է Ռայս համալսարանի Ջեյմս Բեյքըր 3-ի անվան հասարակագիտության ինստիտուտի: Նա նաեւ դեսպան է եղել Սիրիայում եւ Իսրայելում:

Խաղաղության բանակցությունները վարվում են ոչ թե բարեկամների կամ ընկերների, այլ հակառակորդների կամ թշնամիների միջեւ: Սա է դիվանագիտության ամբողջ խնդիրը: Մինչ ՄԱԿ-ի հովանու ներքո Իրանի միջուկային ծրագրին խոչընդոտելու նպատակով իրականացվող ջանքերն ու պատժամիջոցները սպասված արդյունքը չեն արձանագրում, մտահոգություններն ու անհանգստություններն ամբողջ աշխարհում այն աստիճանի են աճում, որ նույնիսկ խոսվում է ռազմական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին: Այս հանգամանքներում եւ նախագահական ընտրությունների մերօրյա թեժ պայքարի շրջանում առավել հրատապ միջազգային հարց չկա կարծես, քան ամերիկա-իրանյան համընդհանուր հարաբերությունները:

Մեր հակառակորդների հետ չբանակցելու հետեւանքները պարզ դարձան մեզ, երբ 2006 թվին մասնակցեցինք Իրաքի հարցը ուսումնասիրողների խմբի (ԻՈՒԽ) աշխատանքներին եւ առիթը ունեցանք հանդիպելու ՄԱԿ-ում Իրանի մշտական ներկայացուցչի հետ: Մ. Նահանգների եւ Իրանի միջեւ պաշտոնական հաղորդակցությունների պակասը ոչ միայն թյուրըմբռնումների առիթ էր տվել մեր քաղաքականության նկատմամբ, այլեւ խոչընդոտել էր, որ մենք կարողանայինք ներգործել իրանցիների դիրքորոշման վրա: Մեր առաջ դրված խնդիրը հետեւյալն է. ինչպե՞ս իրանցիներին ներքաշել լուրջ քննարկումների ոլորտը, որտեղ համընդհանուր եզրեր գտնենք որոշակի հարցերի վերաբերյալ եւ փորձել հայտնաբերել այդ հարցերի լուծումները՝ երկկողմ կամ բազմակողմ ձեւաչափերով:

Մեզ հետ իրանցիներն էլ են ներքաշված Իրաքի պատերազմում, բայց նրանք չեն ցանկանում խոսել միայն Իրաքի մասին: Նրանք քննարկումների առավել լայն շրջանակ են հետապնդում, որտեղ ընդգրկված կլինեն ինչպես երկկողմ, այնպես էլ տարածաշրջանային կարեւոր խնդիրներ:

Մ. Նահանգների եւ Իրանի միջեւ շարունակական երկխոսությունները այնպիսի հարցերում, ինչպիսիք են Իրաքը, Աֆղանստանը, ահաբեկչությունը, արաբա-իսրայելական հակամարտությունը, «Հզբոլլահն» ու «Համասը» կարող էին նախադրյալներ դառնալ հետագայում միջուկային զենքի մեր քննարկումներում լուրջ առաջընթացի հասնելու համար:

Իրանին մենք պարտավոր ենք հաշվի առնել, քանի որ Իրանն իր տարածքային չափսերով, մարտավարական դիրքով, հարուստ պատմությամբ եւ մշակույթով, ինչպես նաեւ գազի ու նավթի պաշարներով իրոք տարածաշրջանային հզոր ուժ է: Իրանը Խորհրդային Միություն չէ, որը սպառնալիք էր համարվում Մ. Նահանգների համար:

Իրանը կարող է սպառնալ Ծոցի եւ տարածաշրջանի իր հարեւաններին, ներառյալ Իսրայելին: Բայց Իրանը քաջ գիտակցում է, որ այդ երկրները կամ դրանց մեծամասնությունը լավ հարաբերություններ ունեն Մ. Նահանգների հետ, եւ նրանց սպառնալու դեպքում ինքը ձեռք կբերի վերջինիս լուրջ հակազդեցությունը: Եվ քաղաքական, տնտեսական կամ նույնիսկ ռազմական միջամտությունները կդառնան իրական:

Իր ներքին տնտեսական եւ քաղաքական խնդիրները հաշվի առնելով, Իրանը լուրջ պատճառներ ունի Մ. Նահանգների հետ իր տարաձայնությունները հակամարտության աստիճանի չհասցնելու համար, քանի որ նման հակամարտությունը կործանարար կլիներ:

Այնպես որ, որպես աշխարհի առաջատար գերտերություն, Մ. Նահանգները կարող է Իրանի վարչակարգին «ճնշման ենթարկել»՝ հրավիրելով վերջինիս լայնածավալ մարտավարական երկխոսության բոլոր կարեւոր հարցերով, որոնք երկկողմ հետաքրքրություն են ներկայացնում: Մեր այս պատրաստակամությունը չպետք է դիտվի որպես զիջում մեր սկզբունքային դիրքորոշումների, որոնք վերաբերում են մեր եւ մեր դաշնակիցների անվտանգությանը: Երկխոսության առաջին քայլ պետք է ծառայեն տարածաշրջանային խնդիրների (Իրաք, Աֆղանստան, Լիբանան, արաբա-իսրայելական հակամարտություն, ահաբեկչություն, Ծոցի երկրների անվտանգություն) քննարկումներն ու իրավիճակի գնահատման փոխանակումները:

Երկկողմ հարաբերությունների հաստատման մեր այս փորձի ընթացքում մենք պետք է հստակ հասկացնենք, որ վարչակարգի փոփոխության նպատակ չենք հետապնդում, այլ ձգտում ենք բարեփոխել Իրանի վերաբերմունքը, դիրքորոշումը, հիմնվելով անշուշտ մարդու իրավունքների եւ ժողովրդավարության սկզբունքների վրա:

Ինչ վերաբերում է միջուկային զենքի խնդրին, որոշ մեկնաբաններ գտնում են, որ Իրանում առնվազն երեք խմբավորումներ կան, որոնցից առաջինը բաղկացած է կարծրագծայիններից, որոնք վճռական են միջուկային այդ կարողությունը ձեռք բերելու առնչությամբ, երկրորդը՝ մարդկանցից, որոնք հետամուտ են իրականացնելու այսպես կոչված «ճապոնական մոդելը», այսինքն՝ սոսկ միջոցներ ձեռք բերել արտադրելու միջուկային զենքեր, բայց դրանից այն կողմ չներթափանցել, իսկ երրորդը՝ խաղաղասերներից, որոնք գտնում են, որ միջուկային զենք ունենալու անհրաժեշտություն չէ: Փոխարենը պահանջում են լուծել առավել կարեւոր սոցիալ-տնտեսական խնդիրներ, ինտեգրվելով համաշխարհային, գլոբալ տնտեսության շարժերին: Այս տարբեր մոտեցումներն անշուշտ պետք է հաշվի առնի Մ. Նահանգները՝ երկխոսություններում հաջողության հասնելու համար:

Մ. Նահանգներ-Իրան հարաբերություններում շատ բան է դրված նժարի վրա: Այդ պատճառով էլ համապարփակ եւ բարձր մակարդակի քննարկումներ են պետք անցկացնել, եւ անմիջական, ուղիղ երկխոսությունը պարտադիր է: Մենք չպետք է բաց թողնենք առիթը գործնական եւ առանց ավելորդ պատրանքների խոսակցություն վարելու տարածաշրջանի ամենակարեւոր եւ ամենաթշնամական երկրներից մեկի հետ:

Թարգմ. Հ. Ծ.

Կաչինսկիներին կարելի է անվանել «բադեր»

Վարշավայի դատարանը մերժել է Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկու վարչակազմի հայցը, վճռելով, որ Կաչինսկի եղբայրներին տրվող «բադեր» մականունը չի արատավորում նրանց հեղինակությունը: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկու եւ նրա եղբայր Յարոսլավի (նախկին վարչապետ, ներկայումս՝ ընդդիմության առաջնորդ) ազգանունը ծագում է «kaczka» (բադ) բառից: Թեեւ լրագրողներից շատերն են այդ բառախաղն օգտագործում, Լեխ Կաչինսկու վարչակազմը հայց էր ներկայացրել գրող Եժի Պիլխի դեմ, որը «Ձեննիկ» օրաթերթի սյունակագիրն է:

Հայցվորները պնդում են, թե «բադեր» մականունն արատավորում է երկու եղբայրների հեղինակությունը: Բայց դատավորը որոշեց, որ մարդկանց կենդանիների եւ թռչունների հետ համեմատելը միշտ չէ, որ վիրավորանք է:

Անցյալում Լեխ եւ Յարոսլավ Կաչինսկիները հումորով էին վերաբերվում իրենց մականվանը: 2005-ի նախընտրական արշավի ժամանակ բադը դարձել էր նրանց «Իրավունք եւ արդարություն» կուսակցության խորհրդանիշերից մեկը: Իսկ Յարոսլավը 2007-ի վերջերին՝ վարչապետի պաշտոնից զրկվելուց մեկ տարի առաջ Վարշավայի զբոսայգիներից մեկում լուսանկարվել էր բադերի հետ:

ՀԱՄԱՌՈՏ

Դամասկոսում փակվել է ամերիկյան դպրոցը

Սիրիայի իշխանությունների հրամանով փակվել է Դամասկոսի ամերիկյան դպրոցը: Դա սիրիացիների պատասխանն է օրերս Սիրիայի տարածքում ամերիկացի զինվորականների ձեռնարկած հատուկ գործողությանը:

Դպրոցի աշակերտներին եւ ուսուցիչներին կարգադրվել է թողնել շենքը: Դպրոցի հեռախոսների վրա դրված է ինքնապատասխանիչ: Վերջինս հայտնում է, որ հաստատությունը փակված է կառավարության կարգադրությամբ: Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ ավելի վաղ՝ նոյեմբերի 30-ին Դամասկոսում աշխատանքն էր դադարեցրել ԱՄՆ դեսպանությունը:

«Ազգը» գրել է հոկտեմբերի 26-ի միջադեպի մասին, երբ Իրաքից 4 ուղղաթիռներով Սիրիայի սահմանամերձ շրջան մտած ամերիկացի դեսանտայինները գյուղերից մեկում սպանեցին ութ խաղաղ բնակիչների, այդ թվում՝ երեխաների: Պաշտոնական Վաշինգտոնն այդպես էլ չմեկնաբանեց իրավիճակը, բայց ԱՄՆ կառավարության աղբյուրները հայտարարեցին, թե հատուկ գործողության թիրախին իբր եղել է «Ալ Ղաիդայի» ահաբեկիչներից մեկը:

Սիրիան ՄԱԿ-ին բողոքեց ԱՄՆ-ի գործողությունների դեմ եւ խզեց դիվանագիտական հարաբերությունները Իրաքի հետ: ԱՄՆ-ի գործողությունները դատապարտեցին նաեւ Ռուսաստանը, Չինաստանը, Ֆրանսիան եւ Լիբանանը:

ՄԱԿ-ի առաջին հումանիտար շարասյունը հասել է Կոնգո

Ընթացիկ շաբաթվա սկզբին ՄԱԿ-ի հումանիտար առաջին շարասյունը մուտք է գործել Կոնգո: BBC-ի տվյալներով, երկրի իշխանությունների եւ ապստամբների զինված հակամարտության հետեւանքով ներկայումս տեղահանվածների թիվը հասնում է 250 հազարի: Շարասյան հետ Կոնգո մտած BBC-ի թղթակիցը հաղորդում է, որ այն ճամբարները, որտեղ անցյալում ապրում էին տասնյակ հազարավոր գաղթականներ, ներկայումս փաստորեն դատարկ են:

Շարասյունը բերել է դեղորայք եւ ջրի մաքրման միջոցներ: Մեկնաբանները նշում են, որ ռազմական գործողությունների հետեւանքով Կոնգոյում հումանիտար աղետ է սկսվել:

Կոնգոյում արդեն 10 տարի շարունակվող հակամարտությունը սրվեց հոկտեմբերի վերջերին, երբ ապստամբները խախտեցին հրադադարը եւ անցան հարձակման: Երկուշաբթի օրը ապստամբների առաջնորդ, գեներալ Նկունդան պահանջեց սկսել ուղղակի բանակցություններ, բայց իշխանությունները մերժեցին նրա պահանջը:

Երեք պայթյուն Թաիլանդի հարավում

Նոյեմբերի 4-ի առավոտյան Թաիլանդի հարավում՝ Նարաթիվաթի նահանգում տեղի է ունեցել երեք պայթյուն: Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, պայթյուններից տուժել է 63 մարդ: Զոհերի մասին չի հաղորդվում:

Ոստիկանության ներկայացուցիչը ԶԼՄ-ներին հայտնել է, որ առաջին ռումբը պայթել է թեյարանի մոտերքում, մյուս երկուսը՝ մրգի շուկայի մերձակա ավտոկայանատեղում:

Պայթեցումների հավանական կազմակերպիչներն իսլամիստ անջատականներն են: Սակայն ահաբեկչությունների համար որեւէ մեկը պատասխանատվություն չի ստանձնել:

Գործակալության տվյալներով, 2004 թվականից մինչեւ օրս Թաիլանդի հարավային երեք նահանգներում 3300 մարդ է զոհվել: Երկրի այդ մասում ապրում են առավելապես մահմեդականներ:

Ընտրությունների նախօրեին մահացել է Օբամայի տատը

Երկուշաբթի օրը Հավայան կղզիներում, 86 տարեկան հասակում մահացել է ԱՄՆ նախագահության դեմոկրատ թեկնածու Բարաք Օբամայի տատը՝ Մեդելին Դանեմը: Օբամայի եւ նրա քրոջ տարածած համատեղ հայտարարության մեջ նշվում է, որ «Մեդելին Դանեմը ընտանիքի անկյունաքարն էր», «անչափ արժանավոր, ուժեղ եւ համեստ կին», որին «մեծ չափով պարտական են» թոռներն ու ծոռներն իրենց հաջողությունների համար:

Ֆրանսպրեսը նշում է, որ տատը էապես օժանդակել է Օբամայի դաստիարակությանն ու կրթությանը այն պահից, երբ լրացավ թոռան 10 տարին, եւ նրա մայրը Ինդոնեզիա մեկնեց աշխատելու:

Նախագահության դեմոկրատ թեկնածուն հոկտեմբերին մեկուկես օրով ընդհատեց ընտրարշավը, որպեսզի այցելի քաղցկեղով ծանր հիվանդ տատին: Ավելի քան տասը տարի առաջ Օբամայի մայրը եւս մահացել էր քաղցկեղից:

Կրկնաելույթից ավելին՝ նոր համերգ է ակնկալվում

Կոնյակի արբեցնող բույրն ու դասական երաժշտությունը տարածվել էին Երեւանի կոնյակի գործարանի հնեցման արտադրամասում՝ հրավիրյալները մեկտեղել էին համտեսն ու ունկնդրումը: Մեկ-երկու կատարումից հետո համտեսը մոռացվեց՝ ներկաները դարձան միայն ունկնդիր. կատարումն էր բարձրակարգ:

Կատարողը «Նաիրի» նվագախումբն էր, որը ստեղծվել է Ֆրանսիայում՝ ջութակահար, դիրիժոր Հայկ Դավթյանի նախաձեռնությամբ եւ Երեւանում էր կոնյակի գործարանի հովանավորմամբ: Երաժիշտը նվագախումբը ստեղծել է ու պահել նախ ընկերական հիմունքներով, իսկ 2005-ից այն արդեն իրավաբանական անձ է եւ կարողանում է տարեկան 8 համերգ տալ առանց որեւէ հովանավորության, զուտ՝ համերգներից ստացվող հասույթով: «Նվագախումբը փորձերի է հավաքվում յուրաքանչյուր համերգից առաջ եւ ցրվում՝ համերգից հետո: Տարվա ընթացքում մի քանի անգամ էլ համերգներից անկախ փորձեր ենք անում համատեղ աշխատելու՝ վարպետությունը պահպանելու համար», տեղեկացրեց «Նաիրիի» գեղղեկ եւ դիրիժոր **Հայկ Դավթյանը**: Նրա ղեկավարությամբ 22 պրոֆեսիոնալ երաժիշտները նվագում են նաեւ հայ դասականների եւ ժամանակակից կոմպոզիտորների գործեր, որոնք նվագախմբի բոլոր համերգային ծրագրերի պարտադիր մասն են. «Երաժիշտները սիրով են կատարում հայկական երաժշտություն եւ Հայաստանում համերգների հնարավորությունը ոգեւորությամբ ընդունեցին: Ի վերջո տարիներով նվագում են հայկական երաժշտություն եւ կարեւորում երկիրը ճանաչելը նույնպես», պատմեց Հայկ Դավթյանը: Նվագախմբի գեղղեկը համոզված է, որ հայկական դասական երաժշտությունը պարզապես ներկայացնել է պետք եւ չկա դրա ընկալման խնդիր: Ու թե «Նաիրիի» Հայաստանից դուրս համերգներն արդեն պատկառելի քանակ ու ազդեցություն ունեն, ապա մեր երկրում նրանց առաջին ելույթներն օրերս կայացան՝ հաջորդեցին Երեւանի կոնյակի գործարանում կայացած ելույթին նախ՝ կամերային երաժշտության տանը, ապա Արամ Խաչատրյան համերգասրահում եւ երրորդը՝ Գյումրիում:

«Համերգաշարը նվիրված էր 1988-ի Սպիտակի երկրաշարժի 20-ամյակին ու ի երախտիք արհավիրքի հետեւանքները հաղթահարելուն սատարած երկրների՝ նվագացանկը կազմել ենք այդ երկրների կոմպոզիտորների ստեղծագործությունների հիման վրա: Եվ անկարելի էր համերգը չներկայացնել հենց Գյումրիում՝ աղետի գոտու ամենամեծ բնակավայրում», պարզաբանեց Հայկ Դավթյանը:

Նա կարեւորում է Հայաստանում դեռեւս չկատարված գործեր ներկայացնելը նույնպես: Արամ Խաչատրյան համերգասրահում Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի (գլխավոր դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան) հետ «Նաիրիի» համատեղ համերգի առաջին մասում կատարվեցին հենց այդպիսի գործեր՝ «Մահվան պարը» (Կ. Սեն-Սանս), «Պոեմ» (Է. Շոսոն): Ի դեպ, համերգի առաջին մասում Հայկ Դավթյանը հանդես եկավ հենց վերջին գործի մենակատարմամբ (ջութակ), իսկ երկրորդ մասում՝ որպես խմբավար՝ երկու նվագախմբերի հետ ներկայացնելով Ղ. Սարյանի «Սիմֆոնիկ պատկերներ», Է. Միրզոյանի «Վալս», Ա. Խաչատրյանի «Մազուրկա», «Վալս» («Դիմակահանդես» ներկայացման համար գրված երաժշտությունից) ստեղծագործությունները:

Ա. Սպենդիարյանի գործերի հանրաճանաչելի դարձնելն էլ Հայկ Դավթյանը իր մշտական անելիքների ցանկում է տեսնում: Համերգի երկրորդ մասը բացվեց կոմպոզիտորի «Երեւանյան էտյուդներ», «Էտյուդ հրեական թեմայով» գործերով: Ողջ նվագացանկն այնպիսի ջերմությամբ մատուցվեց, որ անգամ պրոֆեսիոնալները որպես ունկնդիր արտահայտեցին իրենց գոհունակությունը՝ երկարատեւ ծափերով, որոնք երաժիշտներին բեմում պահեցին նախատեսվածից ավելի երկար՝ մինչեւ կրկնաելույթ:

Ի դեպ, ունկնդրումից հետո ոչ միայն կրկնաելույթի, այլեւ նոր համերգների ակնկալիքն է զարգանում:

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բիենալեն Վանաձորում

Հոկտեմբերի 7-ին 6-րդ միջազգային Բիենալեի շրջանակներում Գյումրիի ժամանակակից արվեստների թանգարանում բացվեց ժամանակակից ստեղծագործությունների ցուցահանդես: Միջոցառմանը միայն արտասահմանից մասնակցում էին ավելի քան 70 արվեստագետներ, արվեստաբաններ, համադրողներ եւ ժամանակակից արվեստի կենտրոնների ներկայացուցիչներ, հայաստանաբնակների մասնակցությունը նույնպես մեծ էր: Իսկ նպատակն էր մարզերում ապրող բնակչությանը հաղորդակից դարձնել ժամանակակից արվեստի բոլոր դրսեւորումներին:

Նոյեմբերի 7-ին նույն ցուցահանդեսը կբացվի արդեն Վանաձորի պատկերասրահում: Այդ կապակցությամբ երեկ «Ռիա Նովոստի» մամուլի կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում Գյումրիից եւ Վանաձորից ժամանած արվեստագետների հետ:

Վանաձորի պատկերասրահը հիմնվել է 1974-ին եւ ունի հարուստ մշակութային ֆոնդ: Արդեն ավանդական է դարձել, որ տարին երկու անգամ պատկերասրահում բացվում են տեղի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսներ:

Գյումրիի Գեղարվեստի ակադեմիայի տնօրեն **Համբարձում Ղուկասյանը** պատկերավոր ներկայացնելով գյումրեցիների ոգեւորությունը, միաժամանակ վստահեցրեց, թե կասկած չունի, որ Վանաձորում էլ ցուցահանդեսը շատ լավ են ընդունելու, որովհետեւ այնտեղ էլ հրաշալի երիտասարդություն կա, իսկ նկարիչներն իրենց գործի նվիրյալներ են ու ամեն ինչ անում են գեղեցիկի տարածման համար:

Վանաձորում կտեսնեն Յան Կրաուչերի, Էլվիրա Ռայթի, Աշոտ Ավագյանի, Վահագն Ղուկասյանի, Սամվել Ղարիբյանի եւ այլոց ստեղծագործությունները: Այս աշխատանքները դեկտեմբերի 7-ին կցուցադրվեն նաեւ Սպիտակում: Այնուհետեւ կազմակերպիչները կտավները կնվիրաբերեն Սպիտակի երկրաշարժի թանգարանին:

Մյուս տարի հունիս ամսին այս կտավները կցուցադրվեն Սալոնիկում, ինչն ըստ Գյումրիի ժամանակակից արվեստի կենտրոնի տնօրեն **Ագատ Սարգսյանի**, լուրջ ձեռքբերում է:

Գյումրին ժամանակակից արվեստի կենտրոն

Հանրապետության երկրորդ քաղաքը՝ Գյումրին այսօր չունի պատկերասրահ: Երկար տարիներ Գյումրիում գործել է Ազգային պատկերասրահի (ԱՊ) մասնաճյուղը, սակայն շենքի հետ կապված բազմաթիվ խնդիրների պատճառով կտավները մի քանի անգամ տեղափոխվել են, այնուհետեւ ցուցանմուշներն ուղարկվել են Երեւան:

«Բազմաթիվ նվիրատվությունների շնորհիվ կտավների հսկայական հավաքածու ունենք, որոնք արդեն երկար ժամանակ չեն ցուցադրվում: Այդ ստեղծագործությունները պետք է շնչեն, ապրեն», մտահոգություն հայտնեց Գյումրիի գեղարվեստի ակադեմիայի տնօրեն Համբարձում Ղուկասյանը՝ նշելով, որ Գյումրիի նման քաղաքին պատկերասրահ է անհրաժեշտ:

ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական **Սոնա Հարությունյանը** փաստեց, որ պատկերասրահի հարցն արդեն կարելի է լուծված համարել. «Նախարարությունը նախատեսել է Աբովյան փողոցում գտնվող նախկինում շքեղ, իսկ այժմ ավերված շինությունը վերանորոգել եւ դարձնել ԱՊ մասնաճյուղ: Շենքը կկառուցվի ժամանակակից պահանջներին համապատասխան եւ կունենա շատ մեծ այգի, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել բացօթյա ցուցահանդեսներ: Այստեղ կներկայացվեն ԱՊ-ում գտնվող բազմաթիվ կտավներ, որոնք արդեն երկար տարիներ չեն ցուցադրվել: Հարկերից մեկն էլ նախատեսված կլինի ժամանակակից արվեստի համար, որի շնորհիվ Գյումրին կդառնա արդի արվեստի կենտրոն», ասաց նա: Եթե այդքան հեշտ է արվեստի կենտրոն դարձնելը, ի՞նչ եք սպասում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Մորգենթաուի պատմությունը»

Նոր ֆիլմ

Նոյեմբերի 6-ին Հայկական ուսումնասիրությունների («ՆԱԱՍՐ») ազգային կենտրոնում (Բելմոնտ, Մասաչուսեթս) կայանալու է կինոբեմադրիչ Աբո Թոռոսյանի նոր՝ «Մորգենթաուի պատմությունը» վավերագրական ֆիլմի պրեմիերան, հաղորդում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը: Հովանավորն է Հարվարդի համալսարանի հայագիտության ամբիոնը: Ներածական խոսքով հանդես է գալու պրոֆ. Ջեյմս Ռասելը:

Ֆիլմում Թոռոսյանը դեսպան Մորգենթաուի պատմությունն է հյուսում նրա հետնորդների՝ Հենրի Մորգենթաու III-ի, Ռոբերտ Մորգենթաուի (թոռներ) եւ դոկտ. Փամելա Աթայների (ծոռ) հետ հարցազրույցների միջոցով:

Թոռոսյանը ծնվել է Ստամբուլում (Թուրքիա): Ավարտել է Ստամբուլի գեղարվեստի ակադեմիան, ստանալով մագիստրոսի աստիճան: Նրա նախորդ ֆիլմերից են «Ականատեսները», «Հայտնագործելով հորս գյուղը՝ Էղինչիկը» եւ «Ձայները»: Նա նաեւ նկարիչ է եւ ցուցահանդեսներ է կազմակերպել Մ. Նահանգներում ու Եվրոպայում:

Հ. Օ.

Մրցանակ՝ հայկական կինոսցենարին

Ֆրանսիական Մոնպելյե քաղաքում անցկացվող Սինեմեդ 30-րդ կինոփառատոնում, որին մասնակցում են Միջերկրական ծովին հարող երկրները եւ Հայաստանը, կինոսցենարների մրցույթում հաղթող ճանաչվեց հայկական «Մոսկվիչ, իմ սեր» կինոնախագիծը, որի սցենարի հեղինակներն են Լեւոն Մինասյանն ու Էսթեր Մանենը, եւ որի բեմադրող ռեժիսորն է լինելու Արամ Շահբազյանը: Մոտ 100 առաջարկված նախագծերից նախօրոք ընտրված 16-ը ներկայացվում են ժյուրիին: Հեղինակները 30 րոպեում պետք է ներկայացնեն իրենց նախագծի գեղարվեստական արժանիքները, սցենարի մասնագիտական կառուցվածքը, սյուժեի առանձնահատկությունները: Լեւոն Մինասյանի եւ Արամ Շահբազյանի «Մոսկվիչ, իմ սեր» սցենարն արժանացել է ժյուրիի հավանությանը եւ 4 մրցանակներից ամենակարեւորին:

Ն. Պ.

Մալեւիչի նկարը վաճառվեց 60 մլն դոլարով

Նյու Յորքի «Սոթբի» աճուրդային կենտրոնում Կազիմիր Մալեւիչի «Սուպրեմատիկ հորինվածք» նկարը վաճառվել է 60 մլն 2,5 հազար դոլարով: Գնորդի անունն առայժմ անհայտ է:

Նկարն ստեղծվել է 1916 թվականին, երբ Մալեւիչը հրապարակեց «Կուբիզմից եւ ֆուտուրիզմից դեպի սուպրեմատիզմ: Գեղանկարչական նոր ռեալիզմ» մանիֆեստը: Ֆրանսպրես գործակալությունը նշում է, որ վաճառքի գինը մոտ է եղել ստեղծագործության նախնական գնահատմանը: Ավելի վաղ Մալեւիչի ստեղծագործությունների դիմաց տրված ամենաբարձր գինը կազմել էր 17 մլն դոլար:



1927-ին Մալեւիչը «Սուպրեմատիկ հորինվածքը» այլ գործերի հետ ի պահ տվեց Բեռլինում, իսկ հետագայում հանրահայտ նկարը ձեռք բերեց Ամստերդամի Stedelijk թանգարանը, որտեղ մնաց գրեթե 50 տարի: 2008 թվականին նկարչի ժառանգների ջանքերով մասնավոր մի հավաքածու վերադարձվեցին որոշ գործեր, այդ թվում «Սոթբիում» վաճառված նկարը:

Հիշյալ աճուրդի ժամանակ վաճառվել են նաեւ Մոնեի, Դեգայի, Պիսսարոյի եւ Մունքի որոշ ստեղծագործություններ: Վերջինիս «Վամպիր» նկարը (1894) վաճառվել է 38 մլն 162,5 հազար դոլարով:

Փամուքը «սիրո ցավի» եւ «գրքերի հոտի» մասին

«Իսկական սերն ավելի շատ նման է ճանապարհային վթարի, քան ռոմանտիկական վիպակում տեղ գտած անհամ քաղցրությանը», ասել է Նոբելյան մրցանակի արժանացած թուրք գրող Օրհան Փամուքը, հոկտեմբերի 22-ին այցելելով Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառ:

Ըստ «Ռոյթերս» գործակալության հաղորդման, որը տպագրվել է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 25-ի համարում, նա աշխարհի այդ ամենամեծ տոնավաճառն այցելել է խոսելու համար իր վերջին՝ «Անմեղության թանգարանը» գրքի մասին, որը սիրո պատմություն է Ստամբուլում ապրող հարուստ մի ընտանիքի որդու եւ նրա հեռավոր, բայց աղքատ բարեկամի դստեր միջեւ: Սա նրա առաջին գիրքն է՝ 2005-ին Նոբելյան մրցանակը ստանալուց հետո:

«Շատ գրքերում սերն այնքան է քաղցրացվում, որ մոռանում ես, թե իրականում ինչ է սերը: Այդ գրքով ես ցանկացել եմ անդրադառնալ այդ խնդրին», նշել է նա՝ նմանեցնելով սերը լուրջ հիվանդության:

Տոնավաճառի այս տարվա ընդհանուր թեման եղել է թուրքական գրականությունը: Փամուքի գրքերը, որոնց թվում են «Ձյունը», «Անունս Կարմիր է», «Ստամբուլ քաղաքը եւ հիշողությունները» թարգմանվել են տարբեր լեզուներով, բայց նրա կյանքը Թուրքիայում վտանգված է հատկապես Հրանտ Դինքի սպանությունից հետո:

Պատասխանելով այն հարցին, թե ո՞րն է իր քաղաքական մեկնաբանությունների դրդապատճառը, նա ասել է. «Ես միեւնույն վրդովմունքն եմ ապրում, ինչ որոշ լրագրողներ եւ կազմակերպություններ, եւ կարեկցում եմ նրանց ու եթե չսատարեմ նրանց, կկորցնեմ իմ արժանապատվությունը»:

Փամուքը Կոլումբիայի համալսարանում այցելու (հրավիրված) դասախոս է եւ քանիցս պարզաբանել է, որ իրեն «արտաքսված գրող» չի զգում: «Ես միշտ կես կատակ ասել եմ, որ իմ տունն այնտեղ է, որտեղ իմ գրքերն են, իսկ իմ գրքերը Ստամբուլում են»: Իսկ Ստամբուլում նա մոտ 70 հազար հատորի հասնող գրականություն է կուտակել, քանի որ գրքերը սիրում է ոչ թե միայն նրանց բովանդակության, այլեւ յուրահատուկ հոտի համար: «Փոքր տարիքում, գրքեր կարդալուց առաջ սովորություն ունեի հոտոտելու: Եվրոպայի հոտը ես իմ հոր Ֆրանսիայից բերած գրքերից եմ առել առաջինը», պատմել է նա:

Ֆրանկֆուրտի տոնավաճառի տնօրեն Յուրգեն Բոսը տեղեկացրել է, որ զանազան սեմինարներ եւ ընթերցումներ են կազմակերպվելու, որոնց ընթացքում ազատորեն քննարկվելու են Թուրքիային եւ այնտեղ ապրող փոքրամասնություններին առնչվող հարցեր:

Հ. ՕՀԱՆՅԱՆ

Առաջատարների «սեւ» օրը

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության վերջնագծում պայքարը բավական թեժ բնույթ է ընդունել: 27-րդ տուրի հանդիպումները դրա վառ վկայությունն են: Ոսկե մեդալների երկու հավակնորդներն էլ «սայթաքեցին»՝ զիջելով բրոնզե մրցանակների համար պայքարող թիմերին:

Արարատցիները հյուրընկալվել էին «Միկային»: Ի տարբերություն նախորդ հանդիպումների, արարատցիներն այդ խաղում չկարողացան կոմբինացիոն խաղ ցուցադրել: Գուցե ավելորդ լարվածությունն էր պատճառը: Ամեն դեպքում ողջ հանդիպման ժամանակ այդպես էլ արարատցիներին չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Փոխարենը թիմը շատ թույլ խաղաց պաշտպանությունում եւ թույլ տված սխալների պատճառով պարտվեց:

Ճիշտ է, «Արարատն» առաջինը բացեց հաշիվը: 22-րդ րոպեին Մարկոսի կատարած տուգանային հարվածից հետո գնդակը հետ մղեց դարպասապահը եւ Ռենատոն գրավեց դարպասը: Բաց թողած գոլը ստիպեց «Միկայի» ֆուտբոլիստներին զգալիորեն ակտիվացնել հարձակողական գործողությունները, իսկ արարատցիները, ընդհակառակը, մեծ ուժերով հետ քաշվեցին: Արդյունքում, 49-րդ րոպեին Արամ Ոսկանյանն օգտվելով պաշտպանների սխալից, խփեց պատասխան գնդակը: Արարատցիները փորձեցին կրկին գրոհի նետվել ու հաղթանակ կորզել, սակայն նրանց մոտ ոչինչ չէր ստացվում: Իսկ ահա «Միկան» ոգեւորված հաջողությունից, բավական ակտիվ գրոհներ էր կազմակերպում: 66-րդ րոպեին Արամ Ոսկանյանը գլխի հարվածով քիչ էր մնացել 2-րդ գոլը խփեր: Իսկ 3 րոպե անց հսկողությունից դուրս մնացած Արմեն Պետրոսյանը դարպասապահի գլխավերեւով գնդակն ուղարկեց «Արարատի» դարպասը: Արարատցիները մեծ ուժերով նետվեցին գրոհի՝ փորձելով փրկել խաղը: Կարող էր աչքի ընկնել պաշտպան Հրայր Մկոյանը, սակայն նրա հուժկու հարվածը հետ մղեց «Միկայի» դարպասապահը: Իսկ խաղավերջում դարպասից դուրս գալիս կոպտորեն սխալվեց «Արարատի» դարպասապահ Նիկոլայ Սարգսյանը եւ Կարեն Ավոյանը 3-րդ գոլը խփեց՝ 3-1:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Սուրեն Բարսեղյան («Միկա»)-Վերջին հանդիպումներում, նույնիսկ «Փյունիկի» հետ պարտված խաղում գոհ եմ մնացել տղաների նվիրվածությունից, խաղին անմնացորդ տրվելուց: Նույնը կարող եմ ասել այսօրվա խաղի մասին: Այս առումով ինչ-որ բանի հասել ենք: Մնում է, որ ֆուտբոլիստները կատարելագործեն վարպետությունը, իրացնեն գոլային պահերը:

Այսօր խաղում էինք չեմպիոնի կոչման հավակնորդներից մեկի հետ եւ բնական էր սպասել, որ դժվարին խաղ էր լինելու: Մանավանդ որ առաջինը գոլ բաց թողեցինք, ինչը, կարծես, սառը ցնցուղի դեր կատարեց մեր ֆուտբոլիստների համար: Իսկ մինչ գոլ թողնելը տարածքային առավելություն ունեինք: Տղաներին զգուշացրել էինք, որ արարատցիները ստանդարտ իրադրությունները շատ լավ են իրացնում, ուստի խորհուրդ էինք տվել ուշադիր լինել: Հենց նման իրադրությունից մրցակիցը գոլ խփեց, կարող էր եւս մեկը խփել: Մրցանակային տեղերի համար պայքարը շարունակվում է եւ, կարծում եմ, առաջնությունում ինտրիգը կպահպանվի մինչեւ վերջ:

Գեւորգ Քամալյան («Արարատ»)-Սա մրցաշրջանի ամենաձախողված խաղն էր, ինչը բոլոր թիմերի հետ էլ պատահում է: Երեք նվիրատվություն կատարեցին մրցակցին, որը հիանալի օգտագործեց դրանք: Հակառակորդը շատ լավ պայքարեց, «Միկայի» ֆուտբոլիստների նվիրվածությունը շատ ավելի մեծ էր, քան մեր տղաներինը: «Փյունիկից» միավորների տարբերությունը մնաց նույնը, ուստի մինչեւ վերջ պայքարելու ենք չեմպիոնության համար:

«Փյունիկն» էլ Կապանում 0-3 հաշվով զիջեց «Գանձասարին»: Արդեն 7-րդ րոպեին Գագա Թբիլաշվիլին բացեց հաշիվը, իսկ ընդմիջումից հետո Դավիթ Խանիշվիլին ու Ալեքսանդր Պետրոսյանը եւս երկու գոլ խփեցին ու ամրապնդեցին թիմի հաղթանակը: «Կիլիկիան» սեփական հարկի տակ զիջեց «Բանանցին»: Միակ գոլը խփեց Սարգիս Կարապետյանը: Մինչ այդ «Բանանցը» եւս մեկ հիանալի հնարավորություն ուներ բացելու հաշիվը, սակայն Վիտալի Լեդենյովի 11 մ հարվածից հետո գնդակը դիպավ դարպասաձողին: «Շիրակ»-«Ուլիս» մրցախաղում դարպասները մնացին անառիկ:

Այսպիսով, մրցաշրջանի ավարտից 2 տուր առաջ չեմպիոնության համար պայքարը շարունակվում է: Նոյեմբերի 9-ին 27-րդ տուրում կկայանան հետեւյալ հանդիպումները. «Արարատ»-«Գանձասար», «Ուլիս»-«Միկա», «Բանանց»-«Շիրակ», «Փյունիկ»-«Կիլիկիա»:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	26	18	5	4	37-16	56
2. Արարատ	26	16	5	5	45-23	53
3. Գանձասար	26	13	7	6	39-25	46
4. Միկա	26	13	6	7	37-26	45
5. Բանանց	26	10	7	9	30-24	37
6. Ուլիս	26	6	7	13	18-29	25
7. Շիրակ	26	4	4	18	14-37	16
8. Կիլիկիա	26	2	5	19	20-60	11

Ռմբարկուները

Մարկոս Պիզելի	«Արարատ»	17
Ալեքսանդր Պետրոսյան	«Գանձասար»	9
Նարեկ Բեգլարյան	«Միկա»	8
Կարեն Խաչատրյան	«Կիլիկիա»	7
Գեւորգ Ղազարյան	«Փյունիկ»	7
Ալբերտ Թադեւոսյան	«Փյունիկ»	7

Շահավետ առաջարկ

Իտալական «Սիենան» ցանկանում է թիմ հրավիրել բրազիլացի Ռոնալդոյին: Ակումբի նախագահ Ջովանի Տրոնատին հայտարարել է, որ պատրաստ է շահավետ պայմանագիր առաջարկել Ռոնալդոյին եւ նրա խփած յուրաքանչյուր գոլի դիմաց 80 հազար ֆունտ ստեռլինգ վճարել: Ռոնալդոն շնորհակալություն է հայտնել նման առատաձեռնության համար, սակայն դեռեւս չի կողմնորոշվել:

Հիշեցնենք, որ նա փետրվարին ծանր վնասվածք էր ստացել «Միլանում» հանդես գալիս: Ամռանը Ռոնալդոյի պայմանագրի ժամկետն ավարտվել էր եւ նա ազատ ֆուտբոլիստի կարգավիճակ է ստացել: Բրազիլացի ֆուտբոլիստը վերջերս է ապաքինվել ու մարզվում է «Ֆլամենգոյի» կազմում: Հնարավոր է, որ Ռոնալդոն ելույթները շարունակի «Ֆլամենգոյում», սակայն չի բացառվում, որ նա վերադառնա Եվրոպա: Ռոնալդոն վնասվածքից հետո առաջին անգամ խաղադաշտ դուրս կգա նոյեմբերի 17-ին, երբ կմասնակցի բարեգործական հանդիպմանը: Նրա գլխավորած թիմը կմրցի Զիդանի թիմակիցների հետ:

Վալուեւի հավանական մրցակիցը Հոլիֆիլդն է

Բավական մեծ է հավանականությունը, որ դեկտեմբերի 20-ին Շվեյցարիայում գերծանր քաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոն Նիկոլայ Վալուեւն իր տիտղոսի պաշտպանության համար մենամարտի պրոֆեսիոնալ բռնցքամարտի վետերան, փառաբանված Էվանդեր Հոլիֆիլդի հետ: 46-ամյա Հոլիֆիլդը չորս անգամ նվաճել է աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Պրոֆեսիոնալ ռինգում իր վերջին մենամարտը Հոլիֆիլդն անցկացրել է Սուլթան Իբրահիմովի հետ՝ զիջելով նրան միավորներով:

Եթե Հոլիֆիլդին հաջողվի հաղթել Վալուեւին, ապա պրոֆեսիոնալ բռնցքամարտի պատմության մեջ կդառնա ամենատարեց աշխարհի չեմպիոնը: Ներկայում ռեկորդակիրը Ջորջ Ֆորմանն է, որը 1994-ին 45 տարեկանում չեմպիոն էր հռչակվել՝ նոկաուտի ենթարկելով Մայքլ Մուրերին:

«Երկարատեւ բանակցություններից հետո համոզված եմ, որ Հոլիֆիլդի հետ մենամարտը կկայանա: Դժվարությունը կայանում է նրանում, որ Շվեյցարիայում մենամարտերի անցկացման հարցում որոշակի սահմանափակումներ են գործում: Եթե շվեյցարական իշխանությունները չթույլատրեն մենամարտի անցկացումը, ապա այն կկայանա Գերմանիայում»:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Վետերան շախմատիստները սկսել են մրցավեճը

Գերմանիայում մեկնարկել է վետերան շախմատիստների աշխարհի 18-րդ առաջնությունը: Մրցաշարին կարող են մասնակցել հունվարի 1-ի դրությամբ 60 տարին լրացած տղամարդիկ եւ 50 տարին լրացած կանայք: Մուտքավճարը 140 եվրո է: Մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով, 11 տուրով: Կանանց եւ տղամարդկանց մրցաշարերում ընդհանուր առմամբ առաջնության պարգեւներն են վիճարկում 338 շախմատիստներ: Կանանց մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 2000 եվրո է: Այստեղ հանդես են գալիս 35 շախմատիստուհիներ: Տղամարդկանց մրցաշարում չեմպիոնը կպարգեւատրվի ոսկե մեդալով եւ 2500 եվրոյով: 2-րդ տեղը գրաված շախմատիստն արծաթե մեդալի համար կստանա 2000 եվրո, իսկ բրոնզե մրցանակակիրը կպարգեւատրվի 1500 եվրոյով: 4-8-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստները կստանան 1000-ից մինչեւ 200 եվրո:

Հայաստանը Գերմանիայում ներկայացնում է միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը: Անցկացված 6 տուրից հետո հայկական շախմատի վետերանը 4 միավորով զբաղեցնում է 43-րդ տեղը 303 մասնակիցների մեջ: Առաջին տուրում Մնացականյանը ոչ-ոքի խաղաց Վեյկո Կոսկինենի հետ, ապա 3 անընդմեջ հաղթանակ տոնեց համապատասխանաբար Մարկ Ռուբինշտեյնի, Ֆրիդե Դահլհաուսի եւ Կառլ-Հայնց Բոդտի նկատմամբ: 5-րդ տուրում հայ շախմատիստն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Միսո Ցեբալոյին: Իսկ 6-րդ տուրում նա հաշտություն կնքեց Բորիս Բլաուշտայնի հետ:

6 տուրից հետո տղամարդկանց մրցաշարի աղյուսակը 5,5-ական միավորով գլխավորում են ռուսաստանցի Վլադիմիր Օնոպրիենկոն, չեխ Վլաստիմիլ Յանսան, ռումինացի Միհայ Շուբան եւ խորվաթ Միսո Ցեբալոն:

Կանանց մրցաշարում 35 մասնակիցներից լավագույն արդյունքի է հասել ռուսաստանցի Գալինա Ստրուտինսկայան, որը 6 հնարավորից ունի 5 միավոր: 4,5-ական միավորով հաջորդ տեղերում են լատվիացի Տամարա Վիլերտեն եւ ռուսաստանցի Լյուդմիլա Սաունինան:

Պովետկինին կփոխարինի Ռահմանը

Գերծանր քաշային կարգում WBO-ի, IBF-ի եւ IBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսները Վլադիմիր Կլիչկոն կպաշտպանի դեկտեմբերի 13-ին ամերիկացի Հասիմ Ռահմանի հետ մենամարտում, որը կկայանա Գերմանիայի Մանհեյմ քաղաքում: Հիշեցնենք, որ այդ օրը Կլիչկոն պետք է մենամարտեր ռուսաստանցի Ալեքսանդր Պովետկինի հետ, սակայն վերջինս վնասել էր ոտքը, ուստի հանդիպումը հետաձգվել էր: Այսպիսով, 35-ամյա Ռահմանը կփոխարինի Պովետկինին չեմպիոնական մրցավեճում:

2005-ին Հասիմ Ռահմանը պետք է մենամարտեր WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը կրող Վիտալի Կլիչկոյի հետ, սակայն մենամարտը մի քանի անգամ հետաձգվեց, իսկ հետագայում էլ Կլիչկոյի լուրջ վնասվածքի հետեւանքով ընդհանրապես չկայացավ: WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը Ռահմանը կորցրել էր Օլեգ Մասկաեւի հետ մենամարտում: Դրանից հետո անցկացրած 5 մենամարտերից 4-ում ամերիկացի բռնցքամարտիկը հաղթել էր, իսկ Ջեյմս Տոնիի հետ կայացած վերջին մրցավեճում արդեն 3-րդ ռաունդում հոնքի լուրջ վնասվածք էր ստացել ու մենամարտը դադարեցվել էր, առանց հաղթողին որոշելու:

Ի դեպ, Վլադիմիր Կլիչկոյին մարտահրավեր էին նետել Օլեգ Մասկաեւը, Դեւարիլ Ուիլյամսոնը եւ էլի մի քանի բռնցքամարտիկներ, որոնցից ուկրաինացին ընտրեց Ռահմանին: Կլիչկոյի ընտրությունից դժգոհ է Մասկաեւի պրոմոութեր Դենիս Ռապոպորտը: «Գտնում եմ, որ Մասկաեւի հետ մենամարտն ավելի հետաքրքրական կլիներ, քան Ռահմանի հետ մրցավեճը: Մասկաեւն ավելի ուժեղ բռնցքամարտիկ է: Սա ոչ միայն իմ, այլեւ մասնագետների կարծիքն է: Օլեգը երկու անգամ ապացուցել է դա ռինգում»:

Նշենք, որ եթե Կլիչկոյի շահերը պաշտպանող K2 պրոմոութերական ընկերությանը չհաջողվեր համաձայնության գալ Հասիմ Ռահմանի հետ, ապա IBF-ը կպարտադրեր Կլիչկոյին մենամարտել դասակարգման ցուցակում բարձր տեղ զբաղեցնող բռնցքամարտիկի հետ: Իսկ Ռահմանն այդ ցուցակում ավելի բարձր տեղ է զբաղեցնում (5-րդ հորիզոնականը), քան Օլեգ Մասկաեւը (6-րդը):

Վիտալի Կլիչկոյի կարծիքով իր եղբոր համար հիանալի մրցակից կարող էր լինել ուկրաինացի Ալեքսանդր Դիմիտրենկոն, սակայն վերջինս արդեն պայմանագիր էր կնքել գերմանացի Լուան Կրասնիչի հետ նոյեմբերին մենամարտելու վերաբերյալ: Վլադիմիր Կլիչկոն մեկնել է իսպանական Մայորկա՝ նախապատրաստվելու առաջիկա մենամարտին:

Մեկնեցին Մակեդոնիա

Այսօր վաղ առավոտյան Հայաստանի ֆուտբոլի կանանց հավաքականը մեկնեց Մակեդոնիայի մայրաքաղաք Սկոպիե, որտեղ կմասնակցի չորս թիմերի միջեւ անցկացվելիք ընկերական մրցաշարին: Առաջին խաղը մեր հավաքականը կանցկացնի նոյեմբերի 7-ին, Էստոնիայի ընտրանու հետ: Երկու օր անց հայ ֆուտբոլիստուհիները կմրցեն դաշտի տերերի հետ, իսկ ավարտական հանդիպումը կանցկացնեն նոյեմբերի 12-ին, Մալթայի հավաքականի հետ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

Անկարան դրական է արձագանքում Մեյենդորֆյան հռչակագրին

1-ին էջից

Ինչ արձագանք կտան Փարիզն ու Վաշինգտոնը Մոսկվայի վերոհիշյալ նախաձեռնությանը, ցույց կտա ժամանակը: Բայց որ «Եվրոնյուսի» թուրքերեն տարբերակ «abhaber.com» կայքէջն ու թուրքական թերթերը միանգամայն դրական են արձագանքել Մեյենդորֆյան հռչակագրի ստորագրմանը, ակնհայտ է: Սա հռչակագրին Եվրոմիության, ինչպես նաեւ Անկարայի դրական արձագանքի վկայությունն է նաեւ:

Նոյեմբերի 3-ին «abhaber.com» կայքէջը, լուսաբանելով հռչակագրի ստորագրումը «Լեռնային Ղարաբաղի համար հույսի աղբյուր» վերնագրով, անդրադարձել է դրա հիմնական դրույթներին, ղարաբաղյան հակամարտությունը միջազգային նորմերին եւ սկզբունքներին համապատասխան խաղաղական միջոցներով լուծելու կողմերի հավաստիացումներին եւ ընդգծել է, որ հռչակագիրը վերջին 15 տարիներին Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների ստորագրած առաջին փաստաթուղթն է:

«Զամանը» հռչակագրին անդրադարձել է նոյեմբերի 4-ի համարում: Ուշագրավ է նյութի վերնագիրը. «Անկարան գոհ է ղարաբաղյան գործընթացին Մոսկվայի միջամտությունից»: Ըստ թուրքական թերթի, Թուրքիան համոզված է, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի մոսկովյան հանդիպումը դրական կանդրադառնա հակամարտության կարգավորման գործընթացին, թեեւ դրա համար էլ հանդիպման առնչությամբ իր աջակցությունն է հայտնել երկու երկրների առաջնորդներին: Ավելին, բարձրաստիճան թուրք պաշտոնյաներից մեկը «Զամանի» հարցերին պատասխանելիս Սարգսյան-Ալիեւ հանդիպումը որակել է «հուսադրող», նշելով, որ Անկարան ի սկզբանե աջակցել է մոսկովյան այս նախաձեռնությանը եւ դա համարել է «կարգավորման գործընթացի բաղադրամաս»:

Նույն աղբյուրը, ըստ «Զամանի», ընդգծել է վերոհիշյալ հանդիպումը Մոսկվայում իրականացնելու կարեւորությունը, նշել է գործընթացին Կրեմլի միջամտության առնչությամբ Անկարայի գոհունակությունը, ուշադրություն է հրավիրել Հայաստանում ռուսական ազդեցության վրա եւ կտրականապես մերժել է վերոհիշյալ միջամտությունը «դեր գողանալու» ռուսական նկրտումներով պայմանավորող դրսեւորումները, ապա եւ ավելացրել. «Առանց Մոսկվայի միջամտության հազիվ թե հնարավոր լինի լուծել Հայաստանի օկուպացման տակ գտնվող Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը»:

Ի տարբերություն «Զամանի», «Հյուրիեթը» նոյեմբերի 3-ի համարում Մեյենդորֆյան հռչակագրի ստորագրումը պայմանավորում է վրացական ճգնաժամի օրերին վարչապետ Էրդողանի առաջ քաշած «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմ» ստեղծելու առաջարկով եւ դա համարում նախագահ Գյուլի երեւանյան այցով սկզբնավորված գործընթացի շարունակությունը: Ահա թե ինչ է գրում «Միլիեթը». «Կովկասում ծագած Վրաստանի ճգնաժամից հետո, որը խախտել էր երկրամասի աշխարհաքաղաքական հավասարակշռությունները, Ռուսաստանը ձեռնամուխ եղավ ազդարարելու տարածաշրջանի կարծրացած մեկ այլ հիմնահարցի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեկնարկը եւ սկսեց կյանքի կոչել «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմի» սկզբունքները»:

Այնուհետեւ «Անկարայի ազդեցությունը» ենթավերնագրով թուրքական թերթը շարունակում է. «Մերձմոսկովյան Մեյենդորֆում իրականացված եռակողմ հանդիպումից երկու ամիս առաջ վարչապետ Էրդողանը Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի եւ վարչապետ Վլադիմիր Պուտինի հետ նույն սեղանի շուրջը քննարկել էր «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմի» առաջարկը: Թուրքիան Կովկասի կայունության եւ անվտանգության հարցերում խաղաղական աջակցություն էր խնդրել Ռուսաստանից: Վրացական պատերազմի օրերին շրջանառության մեջ էին դրվել պնդումներ, թե Բաքուն պատրաստ էր Ղարաբաղի (կարգավորման) համար ուժի գործադրմանը, սակայն վերջին պահին Անկարայի միջամտությամբ հրաժարվեց այդ մտադրությունից: Միաժամանակ տեղեկություններ էին ստացել, ըստ որոնց Հայաստանի նկատմամբ բարի կամքի դրսեւորում հանդիսացող երեւանյան այցի ընթացքում նախագահ Աբդուլլահ Գյուլը «ուժի գործադրումը բացառելու» ուղերձ է փոխանցել Սերժ Սարգսյանին»:

Նույն օրվա համարում «Միլիեթը» հավելում է. «Որքան էլ պաշտոնապես չհայտարարվի, ենթադրվում է, որ (Լեռնային Ղարաբաղում) համակարգված են իրականացվում Ռուսաստանի եւ Թուրքիայի խաղաղ կարգավորման ջանքերը»:

Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը նոյեմբերի 4-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց «Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերությունը կասեցնելու կամ ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցները սառեցնելու» կարգը:

Փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը եւ հրապարակումը» կանոնակարգ 15-ում:

Խորհրդի որոշմամբ գրանցվեցին եւ լիցենզավորվեցին «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն եւ «ՅՈՒՆԻԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրվեց «ԴԻՆԱՅՆ» ՍՊԸ-ին, իսկ «ԱԼՖԱ-ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-ին տրամադրվեց լիցենզիա ոչ կյանքի ապահովագրության իրականացման հետեւյալ նոր դասերով.

- երաշխիքի տրամադրում,
- աջակցության ապահովագրություն,
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն:

Ուժը կորցրած ճանաչվեց «ԵՐԵՎԱՆ ԲՐՈՔԵՐ» ՍՊԸ-ին 11.04.2003 թ.-ին տրամադրված արժեթղթերի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու թիվ 436 լիցենզիան:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ՝ 7.75 տոկոս

2008 թ. նոյեմբերի 4-ի նիստում ԿԲ խորհուրդն անփոփոխ թողեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 7.75%:

2008 թ. հոկտեմբերին սեպտեմբերի նկատմամբ արձանագրվել է 0.7% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը նվազել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 8.6%:

ԿԲ խորհուրդը հաստատեց, որ երրորդ եռամսյակում ներքին եւ արտաքին միջավայրի զարգացումները հիմնականում համահունչ են եղել տոկոսադրույքների նախորդ նիստի ժամանակ ներկայացված գնահատականներին, իսկ հոկտեմբերին արտաքին միջավայրի գնաճային ճնշումները, կրելով համաշխարհային պահանջարկի անկման ազդեցությունը, շարունակել են թուլանալ՝ արտահայտվելով պարենային եւ ոչ պարենային ապրանքների միջազգային գների հետագա նվազմամբ: Ընդ որում, արտաքին գնաճային ճնշումների թուլացման վերջին մի քանի ամիսներին նկատվող միտումները, թեեւ ոչ ամբողջությամբ, սկսել են արտահայտվել նաեւ ներքին շուկայում:

ԿԲ խորհուրդը, հաշվի առնելով միջազգային ֆինանսական ճգնաժամի պայմաններում արտաքին շուկաներում գների բարձր տատանողականությունը, ճգնաժամի տեւականության եւ դրա հետեւանքների հաղթահարման ժամկետների անորոշությունները, ինչպես նաեւ ներքին շուկայում գնային ճշգրտումների դանդաղ ընթացքը, նպատակահարմար է գտնում պահպանել տոկոսադրույքների անփոփոխ մակարդակը:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Նոյեմբերի 8-ը՝ համաքաղաքային շաբաթօրյակի օր

Հարգելի համաքաղաքացիներ,

Երեւանի քաղաքապետարանը 2008 թ. նոյեմբերի 8-ը հայտարարել է համաքաղաքային շաբաթօրյակի օր:

Երեւանը մաքուր, բարեկարգ դարձնելու համար ակնկալում ենք մայրաքաղաքի բնակչության ակտիվ մասնակցությունը համաքաղաքային շաբաթօրյակին:

Մաքուր պահենք մեր քաղաքը:

Երեւանի քաղաքապետարան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ Հաշվապահական հաշվառման վարչության ՀՀ կենտրոնական բանկի գործունեության հաշվապահական կանոնակարգման եւ հաշվետվությունների բաժնի ***«հաշվապահ-վերլուծաբան»*** *թափուր աշխատատեղի համալրման համար:*

Աշխատանքի նպատակն է. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական գործունեության արդյունքների եւ փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության ապահովում: ՀՀ կենտրոնական բանկի բյուջեի հետ կապված գործընթացների մասնակցություն:

Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.

Մասնակցում է հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական արդյունքների, ՀՀ կենտրոնական բանկի «Միջազգային պահուստների վիճակի վերաբերյալ» եռամսյակային եւ տարեկան հաշվետվությունների կազմմանը:

Մասնակցում է Հաշվապահական հաշվառման վարչության կողմից իրականացվող գործընթացների նկարագրման աշխատանքներին, բացահայտում եւ գնահատում է ռիսկերը:

Իրականացնում է աշխատանքներ ՀՀ կենտրոնական բանկի ստորաբաժանումների հետ՝ ՀՀ կենտրոնական բանկի ծախսերի նախահաշվի եւ կապիտալ ներդրումների պլանավորման համար ներկայացվող պահանջների ապահովման առումով, մասնավորապես՝ ստուգում է ներկայացվող հիմնավորումների ամբողջականությունը, իրատեսականությունը եւ ճշտությունը:

Իրականացնում է հաշվապահական գործառնությունների եզրափակիչ շրջանառության վերստուգման հետ կապված աշխատանքներ, կատարում է վերջնական հաստատում:

Իրականացնում է աշխատանքներ արտաքին աուդիտորական կազմակերպությունների եւ ՀՀ կենտրոնական բանկի վերստուգիչ խմբի հետ:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.

Բարձրագույն տնտեսագիտական կրթության պարագայում՝ 6 ամսվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկից դուրս:

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 1.5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկից դուրս:

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ հաշվապահական հաշվառում (խորացված), միջազգային հաշվապահական ստանդարտների իմացություն (խորացված), ֆինանսական վերլուծություն (խորացված), բանկային գործ (խորացված), բանկային օրենսդրական եւ նորմատիվային դաշտ (խորացված):

Լեզուների իմացություն՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն (անգլերեն եւ ռուսերեն՝ մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office), «Գործառնական օր», հաշվապահական հաշվառման ծրագրեր:

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2008 թ. նոյեմբերի 18-ը

Աշխատավարձը՝ 149 500 դրամ

Պահանջվող փաստաթղթերը.

Դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում- www.cba.am , «Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում):

Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով:

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www.cba.am) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել ՝ 59-26-34 եւ 26-23 (ներքին):

Հասարակայնության հետ կապերի ծառայություն

Արաբկիրի թաղապետարանն աճուրդի է ներկայացնում դուրս գրված հետեւյալ գույքերը՝ ըստ մասնագետի գնահատման.

1. Տեսախցիկներ
2. Համակարգիչներ
3. Տպիչ
4. Սառնարան-պահարան
5. Բջջային հեռախոսներ
6. Հեռուստացույց
7. էլ. ծակիչ (դրել), էլ.կտրիչ (բալգարկա), էլ.սղոց (լոբզիկ)
8. Հեռախոսի կայան
9. Պահարան-ցուցադրական
10. 2000 թ. արտադրության Գազ 3110 մակնիշի ավտոմեքենա:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել Արաբկիրի թաղապետարան՝ 28-51-01 եւ 28-13-51 հեռախոսահամարներով:

«ՖԼՈՐԵՍ» ԱՃՈՒՐԴԻ ՏՈՒՆ ՍՊԸ-ն «Աղաման» ԵԱՀ բորսայի հարթակում կազմակերպում է «Արֆին» վարկային միություն ՍՊԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը՝

1. Բնակարան, ընդհ. մակերեսը 78,05 քմ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Նար-Դոսի 75, բն. 3:

Մեկնարկային գինը՝ 20.400.000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ՝ հոլանդական եղանակով 04.12.2008 թ.-ից յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 13.00, մինչեւ 30.05.2009 թ.-ը՝ Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում: Տեղեկությունների համար դիմել՝ հեռ. 56-31-15, 56-52-28:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա Ն 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 4.11.2008, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: